Azg
armenian daily

17 ԱՊՐԻԼ 1998 ՈՒՐԲԱԹ # 66 (1569)

Կանցկացվեն Վրաստան-Թուրքիա համատեղ զորավարժություններ

ԹԲԻԼԻՍԻ, 16 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Իսմայիլ Հաքը Քարադային եւ Վրաստանի պաշտպանության նախարար Վարդիկո Նադիբաիձեն Վրաստանի պաշտպանության նախարարությունում կայացած բանակցություններից հետո ստորագրել են ռազմական համագործակցության հարցում փոխըմբռնման հուշագիր եւ այս տարվա համագործակցության ծրագիր:

Ինչպես մամլո ասուլիսի ժամանակ հայտարարել է Վարդիկո Նադիբաիձեն, սահմանվում են ռազմատեխնիկական ոլորտում Թուրքիայի հետ համագործակցության նոր գերակայություններ: Նա նշել է, որ Թուրքիան Վրաստանի համար անհատույց կադրեր կպատրաստի իր բարձրագույն ուսումնական հաստատություններում, նաեւ ծրագրված են բոլոր զորատեսակների զինումների ընդլայնում, համատեղ զորավարժությունների անցկացում: Մշտապես կաշխատեն երկու կողմերի փորձագիտական խմբերը, որոնց շնորհիվ տարածաշրջանում կամրապնդվեն վստահության եւ փոխադարձ անվտանգության միջոցները:

Ինչպես հայտարարել է Նադիբաիձեն, արդեն այս տարի, այն բանից հետո, երբ ժամկետները կհենարկեն երկու կողմերի փորձագետները, կարող են տեղի ունենալ վրաց-թուրքական համատեղ զորավարժություններ:

ՄԱՄԼՈ ՀԱՅԵԼԻ

Ազգային ժողովում ճեղազրույցների հինգշաբթի

ՇԱՄԻՐԱՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Քաղաքական խավը մտահոգված է խորհրդարանի լուծարվել-չլուծարվելու հարցով, իսկ խորհրդարանը հենց այդ ժամանակ որակական նոր փուլ է ապրում, օրեցօր օգտվեն անակնկալներ մատուցելով այստեղ հավատարմագրված զանգվածային լրատվության ներկայացուցիչներին: Օրինակ, այստեղ ամեն հինգշաբթի ԱԺ խմբակցությունների եւ պատգամավորական խմբերի ճեղազրույցներն է: Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի նախաձեռնությամբ նրանց բոլորին տրամադրված է կես ժամ մամուլի հետ երկխոսության համար, թեման առաջարկում են իրենք պատգամավորները:

Այնուամենայնիվ, առաջնեկ հանդիպմանը բնականոն ընթացք տվեց «Ազատություն» ռադիոկայանի աշխատակից Նարինե Մկրտչյանը, որն, օգտվելով իր դիրքային առավելությունից (զբաղեցնում էր առաջին աթոռը), անխիղճ բոլոր պատգամավոր ներկայացուցիչներին պարտադրեց պարզաբանել ԱԺ խմբերի եւ խմբակցությունների դիրքորոշումը երկու հիմնախնդիրների շուրջ. Ընդհանրացված կոչեմ այսպես, «Ընտրական օրենսգիրք» եւ «Սահմանադրական փոփոխություններ»:

Ճիշտ ընտրված այս ելակետը տվեց իր արդյունքները, քանի որ մեկնաբանելով դիրքորոշումները, ԱԺ խմբերը եւ խմբակցությունները բնազդաբար թե միտում[illegible] տահայտում էին իրենց [illegible]ական, խմբային եւ կուսակցական շահերը: Այսինքն, հաղորդում էին նաեւ այն դրդապատճառները, որոնք ընկած են պատգամավորական միավորումների դիրքորոշման հիմքում:

Տես ► էջ 2

ՇԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ-83

Պայքար ցեղասպանությունը ժխտողների դեմ

Չեկ Փորքերը խոսում է ցեղասպանության ռեւիզիոնիստական մոտեցումների մասին

Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության 83-րդ տարելիցի առթիվ երեկ, ապրիլի 16-ին, Բելմոնտի (Մասաչուսեթս) հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի (ՀՈՒՀԱԱ) կենտրոնում տեղի է ունեցել ճանաչված գիտնական դոկտոր Չեկ Փորքերի դասախոսությունը «Խեղված հիշողություն. խեղաթյուրված պատմություն: Ժխտում եւ ռեւիզիոնիզմ ցեղասպանությունների» թեմայի շուրջ: Խոսելով վերջին շրջանում ցեղասպանությունների առնչությամբ հրատարակված ուսումնասիրություններում եւ հուշագրություններում տեղ գտած ռեւիզիոնիստական մոտեցումների մասին, նա հատկապես անդրադարձել է հայկական ցեղասպանությանը, նշելով որ 83 տարիներ անց հայերը, լինելով դարաշրջանի առաջին զոհերը, լափազանց անհերթեթ իրավիճակի մեջ են գտնվում, ստիպված լինելով ապացուցելու, որ այդ ահավոր ողբերգությունը երբեւէ տեղի է ունեցել: Մյուս ցեղասպանությունների զոհերը՝ հրեաները, գնչուները ու համասեռականները (30-40-ական թվերին), ինչպես նաեւ նորագույն զոհերը՝ կամբոջացիները, բոսնիացիները ու ռուանդացիները նույնպես ստիպված են իրենց ցեղասպանությունը ժխտողների դեմ պայքարել:

Աշխույժ եւ հետաքրքիր դասախոսությանը հետեւել է հարց ու պատասխանի բաժինը: Այս մասին է հաղորդել ՀՈՒՀԱԱ-ի մամուլի բաժնից ստացված ֆաքսը: Ավելացնենք, որ Փորքերը ցեղասպանության հարցերով զբաղվող գիտնականների ասոցիացիայի փոխնախագահն է եւ «ցեղասպանության հանրագիտարանի» թղթակից խմբագիրներից մեկը:

Ն. Օ.

Թուրքիա-Իսրայել ռազմական համագործակցությունը մեծ վտանգ է

Հարցազրույց Հայաստանում Սիրիայի հայկական դեսպանի հետ

Այսօր Սիրիայի Արաբական Հանրապետության ազգային տոնն է: Այդ առիթով «Ազգ»-ը այս եւ հաջորդող էջերում ներկայացնում է կարեւոր տեղեկություններ հայերիս համար ամենաշատ այդ երկրի նրա բարեկամ ժողովրդի կյանքի, մամուլի, նրա ղեկավարի մասին, նոպատակ ունենալով ընթերցողին ավելի մաշելի դարձնել մեր տարածաշրջանի կարեւոր պետություններից մեկին:

- Նախեւառաջ ցանկանում եմ ձեզ շնորհավորել Սիրիայի Արաբական Հանրապետության ազգային տոնի կապակցությամբ, եւ խնդրում եմ ամփոփ ձեւով պատմեք այս պատմական իրադարձության մասին:

- Իմ շնորհակալությունն եմ հայտնում գեղեցիկ շնորհավորանքի համար: Ինչ վերաբերում է ազգային տոնին, ապա այն կարեւոր պահ է եւ իրադարձություն իմ երկրի պատմության մեջ եւ որը արդյունք է նախեւառաջ օսմանյան գաղութարարության, ապա ֆրանսիական մանդատի դեմ ուղղված ազգային երկար ժամանակաշրջանի ազգային պայքարի:

1946 թ. ապրիլի 17-ին ազգային դրոշը վեր բարձրացավ Սիրիայի հողի վրա, ազդարարելով անկախության ժամանակաշրջանի սկիզբը: Դա դարձավ կարեւոր իրադարձություն ժամանակակից Սիրիայի կառուցման եւ ազգային նվաճումների համար, որին ականատես եղավ Սիրիան վերջին 52 տարիների ընթացքում եվ հատուկ 1970 թվից հետո, երբ նախագահ Հաֆեզ Ասադը սկսեց ղեկավարել Սիրիան: Քաղաքական եւ տնտեսական բազմաբնույթ ուղղությամբ ամրապնդելով հասարակության մեջ ժողովրդավարության կիրառումը եւ կառուցելով օրենքի պետություն, որը հենվում է երկրի Սահմանադրությունը հարգելու վրա: Այժմ օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններն իրենց լիազորություններն իրականացնում են ըստ այդ սահմանումների, որը նախատեսում է Սահմանադրությունը: Դրան զուգահեռ Սիրիան սկսեց ազգային տնտեսություն կառուցել, խրախուսելով անհատ նախաձեռնողներին, պատշտպանելով ազգային եւ արտասահմանյան ներդրումները մասնավոր սեկտորի եւ պահպանելով պետության սեփականությունը որոշ արտադրական ասպարեզներում: Այսպիսով ազգային տնտեսությունը սկսեց հենվել երեք սեկտորների վրա՝ պետական, սեփական եւ համատեղ:

Տես ► էջ 5

Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով Սորբոնում

ԵՐԵՎԱՆ, 16 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 16-ին Փարիզի Սորբոնի [illegible] մասնաճյուղում բացվեց Հայոց ցեղասպանության [illegible] խորագիրը կրող միջազգային [illegible] գիտաժողովը: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, գիտաժողովը նոպատակ ունի ոչ միայն հայոց ցեղասպանության պատմական փաստերի վկայությունների արծարծմամբ կրկին հիշեցնել այդ ցեղասպանության մասին, այլեւ նոպաստել մարդկության դեմ նման ոճիրների կանխարգելմանը: Գիտաժողովին մասնակցում են գիտնականներ [illegible] Միացյալ Նահանգներ [illegible] Ֆրանսիայից [illegible] պատմաբանությունը հանձնարարությունը, հովանավորներից է [illegible] Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը:

Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն ապրիլի 16-ին հանդես գալով Փարիզի հայկական ռադիոկայանով, շեշտեց Կիլիկիո աթոռի հատուկ կարեւորությունը հայ դատին եւ այդ հարցում նրա ունեցած պատասխանատվությունը:

Համանախագահների հերթական այցը մայիսի սկզբին

ԵՐԵՎԱՆ, 16 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մարդային այցը Անդրկովկաս նախատեսվում է անցկացնել մայիսի սկզբին: Հայտնելով այս մասին, ANS-press գործակալությունը նշում է, որ ապրիլի վերջին նախատեսվող այս այցի ժամկետները հետաձգվել են ՀՀ նորընտիր նախագահ Ռոբերտ Քոչարյանի խնդրանքով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Պոլ Պոտը մահացավ

16 ԱՊՐԻԼ, BBC, DW: Կամբոջայի կոմունիստական նախկին բռնակալ 73-ամյա Պոլ Պոտը մահացավ ստրի նոպայից: Վերջին ժամանակներս նա կալանված էր պահվում երկրի արեւմտյան մասում գտնվող Կարմիր խմերների ճամբարում, որոնց առաջնորդն էր անցյալում: Պոլ Պոտի ստրի նոպայի պատճառը երեւի այն էր, որ Կարմիր խմերները որոշել էին նրան հանձնել Միջազգային տribունալին: Պոլ Պոտը մեղադրվում է սեփական ժողովրդի դեմ ցեղասպանություն իրականացնելու մեջ, որի հետեւանքով սպանվել են շուրջ 2 մլն կամբոջացիներ: Որոշ մեկնաբաններ հիշեցնում են, որ փորձելով Պոլ Պոտին փրկել պատասխանատվությունից՝ Կարմիր խմերներն առաջներում մի քանի անգամ հայտարարել էին արդեն նրա մահման կամ հիվանդության մասին:

Պավարոտին չի երգի Ալիեւի ծննդյան օրը

ՄՈՍԿՎԱ, 16 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մոսկովյան «Կոմերսանտ դեյլի» թերթի հաղորդման համաձայն, մայիսի 9-ին, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի ծննդյան օրը, Ադրբեջանի մշակույթի նախարար Փոլադ Բյուլ-Բյուլի իրավերով Բաքվում պետք է կայանար Լուչանո Պավարոտիի համերգը, որի համար երգչի հաշվին փոխանցվել էր կանխավճար 300 հազար դոլարի չափով, իսկ ամբողջ համերգը պետք է արժենար մեկ միլիոն դոլար: Սակայն Ալիեւի համախոհները եւ ընկերները չկարողանալով հավաքել մնացյալ գումարը՝ ստիպված համերգը չեղյալ են հայտարարել:

ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

Ադրբեջանցի փորձագետների 82 տոկոսը կողմ է դարաբաղյան խնդրի ռազմաքաղաքական լուծմանը

ԲԱՔՎԻ, 16 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ազատություն» ռադիոկայանի Բաքվի բյուրոն առաջին անգամ 1998 թվականի ապրիլի 6-10-ը սոցիոլոգիական հարցում է անցկացրել 50 փորձագետների շրջանում: Հարցմանը մասնակցել են զանգվածային լրատվության առաջատար միջոցների ներկայացուցիչներ, ոչ պատշտոնական կազմակերպությունների անկախ փորձագետներ, գիտնականներ, հետազոտական կենտրոնների ղեկավարներ: Առաջին հարցը վերաբերում էր երկրի ղեկավարության ներքին եւ արտաքին քաղաքականության գնահատականին, տնտեսական բարենորոգումների անցկացմանը եւ դարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Գնահատականների չափանիշները հետեւյալն էին՝ դրական, միջին, բացասական: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ մասնակիցների 44 տոկոսը դրականորեն է պատասխանել Ալիեւի ղեկավարության արտաքին քաղաքականությանը, 38 տոկոսը միջին, 20 տոկոսը ժխտական: Կառավարության ներքին քաղաքականության առնչությամբ դրականորեն է պատասխանել 24 տոկոսը, միջին 24 տոկոսը, բացասական վերաբերմունք է ցուցաբերել 52 տոկոսը:

Անցկացվող տնտեսական բարենորոգումները դրականորեն է գնահատել հարցման մասնակիցների 18 տոկոսը, միջին 26 տոկոսը, բացասական 56 տոկոսը: Կարելի է ենթադրել, որ եթե հարցումն ընդգրկեր հանրապետության շրջանների եւ գյուղերի բնակիչներին, ապա Ալիեւի ներքին քաղաքականության բացասական գնահատականը շատ ավելի բարձր կլիներ: Այդ դժգոհությունը կարող է իր դերը խաղալ ընտրություններում կառավարության թեկնածության դեմ:

Հարցման մասնակիցների 26 տոկոսը դրականորեն է գնահատել կառավարության գործունեությունը դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում, 30 տոկոսը միջին, 44 տոկոսը բացասական: Դարաբաղը ամեն մի ադրբեջանցու ամենացավոտ հարցն է: Այդ պատճառով 44 տոկոս կազմող բացասական թվերը կարող են կարեւոր դեր խաղալ նախագահական ընտրություններում:

Երկրորդ հարցը կապված էր դարաբաղյան հակամարտության կարգավորման միջոցների հետ: Փորձագետների մեծամասնությունը (82 տոկոս) գերադասել է ռազմաքաղաքական ուղին, այսինքն հաշտության բանակցություններ վարելու հետ մեկտեղ ամրապնդել բանակը: 12 տոկոսը նշել է, որ հակամարտությունը պետք է կարգավորվի բանակցությունների միջոցով, 6 տոկոսը կազմում են ռազմական ուղու կողմնակիցները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿ

«Հանրաքեսություն»

Կարծում եմ, որ Վիգեն Խաչատրյանին խմբակցությունը որոշել էր գործուղել ճեպազրույցը վարելու ոչ պատահաբար: Ընտրական օրենքի նախագծի իր հեղինակներից մեկն է, ընտրություններում նախագահի թեկնածու, որն ապացուցեց, որ ցանկացած անբարենպաստ քաղաքական մթնոլորտում ի վիճակի է «հանդգնիչ» կեցվածք ցուցաբերել:

Այդ առումով երեւի իզուր չէ, որ ընդդիմադիր կեցվածք ընդունած էդվարդ Եգորյանի ընտրական օրենքի նախագիծը ՀՀՇ-ն ու նրան մերձակա կուսակցություններն աջակցեցին չեզոքացնել Արա Սահակյանի ընտրական օրենքի նախագիծն աջխարհ բերելով: Սակայն քաղաքական իրադարձությունները ճեպընթաց փոխվեցին, եւ ՀՀՇ-ն գերադասեց սվերը, առաջին պլան մղելով Վ. Խաչատրյանին: Նա դարձավ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ եւ հրամցրեց ընտրական օրենքի մի նոր տարբերակ:

Կընդունվի՞ այդ տարբերակը որպես հիմք, թե ոչ՝ ցույց կտա ժամանակը: Սակայն պատահական չէ այն հանգամանքը, որ Արա Սահակյանը հանեց շրջանառությունից ընտրական օրենքի իր նախագիծը, ուրեմն Խաչատրյանի տարբերակն արտահայտում է «Հանրաքեսության» քաղաքական սպասելիքներն առաջիկա քաղաքական զարգացումներում:

Այսպես թե այնպես քաղաքական ուժերի ներկայիս կարգավիճակը եւ մադվա ախորժակները բնորոշում են ընտրական օրենքի երկու հիմնադրույթները՝ համամասնականի եւ մեծամասնականի փոխհարաբերակցությունը եւ ընտրական հանձնաժողովների ձեւավորումը ըստ ներկայացուցչության:

Չնայած որ Խաչատրյանը գերադասում էր վկայակոչել սեփական անձը, ուզեմ, թե չուզեմ պետք է վկայակոչեմ «Հանրաքեսությունը», քանի որ Խաչատրյանը տվյալ պահին ներկայացնում էր խմբակցությունը:

Եվ այսպես, օրենքի նախագծում ունենալով 40 եւ 91 հարաբերակցությունն հօգուտ մեծամասնականի, որն Խաչատրյանը կողմ է Աժ-ի կուսակցական կազմին, չնայած դրան, գտնելով, որ նախընտրական բլոկ կազմող կուսակցությունները պետք է ներկայացվեն հետագայում Աժ-ում մեկ միավորով:

«Հանրաքեսությունը» գերադասեց 1995 թ. բլոկով գնալ ընտրություններին, ինչի արդյունքում թե մեծ, թե մանր կուսակցություններն ունեցան իրենց ուրույն ձայները, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում երկուական ձայներ: Հիմա ուզում են, որ արդարություն լինի, քանի որ առաջնային չեն եւ առաջվա ուժն էլ տեղը չի, որ շրջադարձի ծեռքերը ոլորելով Սահմանադրություն հաստատեն եւ Աժ-ում իշխող քաղաքական մեծամասնություն կազմեն:

Լինելով «ճշտի» կողմնակից, «Հանրաքեսությունը» գտնում է, որ «Սահմանադրության հետ մենք կրակը չենք ընկել: Պեղատոմսը Սահմանադրությանը հետեւելու մեջ է, այլ ոչ թե Սահմանադրությունը փոխելու»:

Այսպիսի լավ կարգախոսներ շատ ասվեցին: Օրինակ, ասենք՝ «Պետության ղեկավարը չպետք է հարմարեցնի պետությունը իր գաղափարներին»: Կամ թե՝ «Ով ուժեղ է, նա էլ պետք է փոխի՞ Սահմանադրությունը», կամ էլ՝ «Ինքը Աժ-ն չի գնա լուծարման: Բայց եթե ցուցում տան, կլուծարվի»: Աժ-ի ընտրությունների վերաբերյալ՝ «Եթե կրկնվի այն, ինչ ընտրություններին եղավ, նույն վիճակը կլինի»:

Լսելով այս ամենը, մտածում էի, ինչու ուշ այցելեցին այս շիտակ մտքերը: «Հանրաքեսություն» խմբակցության ղեկավարներին: Երեւում է, իշխանություն կորցնելն այնքան էլ վնասաբեր չէ:

ԻՄ խմբակցությունը

Ներկայացրեց ԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը, որի կարծիքով, երբ իշխանությունները պետք է լինեն համահավասար, քանի որ «ռա-

ՍԱՄՎԵԼ ՀԱՅԵԼԻ

Ազգային ժողովում ճեպազրույցների հինգշաբթի

խիտիկ՝ վիճակը» անընդունելի է: Ըստ ԻՄ-ի, նախագահը եւ վարչապետը պետք է լինի միանձնյա, մարզպետներն ընտրվի:

Դա Սահմանադրության առիթով, իսկ ընտրական օրենքի ԻՄ-ի համար գերադասելի է Եգորյանի օրինագծի տարբերակը: Այսինքն, համամասնական համակարգով 81 պատգամավոր, մեծամասնական 50:

Իմացանք նաեւ, որ պրն Հայրիկյանը գործադիր իշխանություններում պետպատշաճ զբաղեցնելը համարում է անլուրջ, սակայն առաջարկ է ստացել Ռոբերտ Քոչարյանից դեռ նախընտրական փուլում լինել գլխավոր խորհրդական պետահրավական հարցերով, ինչն իր տրվել է հանի որ բխում է ԻՄ ծրագրային դրույթներից:

Սնում է սպասել, թե իշխանավորների ինչ քայլեր կհաջորդեն առաջարկին:

Հայկոմկուսի խմբակցությունը

Ըստ Սերգեյ Բաղալյանի եւ Ֆրունզե Խառատյանի, Սահմանադրությունը լուրջ փոփոխման կարիք ունի: Մասնավորապես ՀՀ նախագահի լիազորությունները պետք է կտրուկ սահմանափակվեն, կատարվի իշխանության վերաբաշխում, Սահմանադրական դատարանն իր լիազորություններով պետք է նման վի գերագույն վճռաբեկ մարմնի, որը վերջին ճշմարտության ատյանը կդառնա պետություն-քաղաքական ուժեր, պետություն-քաղաքացի հարաբերակցություններում:

Ըստ Հայկոմկուսի, այժմ Սահմանադրական դատարանն իրավաբանի դեր ունի, իսկ Աժ-ն կոմիտեի, որը վավերացնում է կառավարության որոշումը:

Կոմկուսը գտնում է, թե ամեն ինչ կփոխվի, եթե պատգամավորի մանդատը լինի առաջնային, իսկ ՀՀ նախագահինը երկրորդային, այսինքն Ազգային ժողովի պատգամավորական կազմն ընտրի երկրի նախագահ:

Կառավարությունն էլ անմիջականորեն պետք է կազմվի Աժ-ի քաղաքական մեծամասնության կողմից: Այսինքն, ՀՀ նախագահին Հայկոմկուսը տեսնում է անգլիական թագուհու դերում, գտնելով, որ այսպիսի դասավորումը զերծ կպահի Հայաստանը բոլոր տեսակի քաղաքական անակնկալներից եւ այն իրողությունից, երբ՝ «ընտրություններին մասնակցելը մի յուրահատուկ սպորտածեւ է դարձել, որի դրսեւորումներին ժողովուրդը մոտենում է փիլիսոփայաբար»:

ԱԺՄ խմբակցություն

ԱԺՄ-ն, ի դեմս պրն Շավարշ Քոչարյանի, որպես հիմք ընդունում է Եգորյանի ընտրական օրենքի նախագծի տարբերակը:

Սահմանադրության վերաբերյալ պրն Քոչարյանն արտահայտվեց կարճ ու կտրուկ. «Պայքարում ենք՝ Ինչի՞ համար ինձ համար պարզ չէ դրավ:

Այն հարցին, թե կգա՞ արդյոք Վազգեն Մանուկյանը խորհրդարան, տրվեց եւս կարճ պատասխան. «Կան պատգամավորներ, որոնք ներկա են Աժ-ում, բայց քաղաքական կյանքում չկան»: ՀՀ նախագահի հետ հնարավոր համագործակցության վերաբերյալ հարցին ասվեց ԱԺՄ-ն պատրաստ է աջակցել, եթե քայլեր արվեն համակարգը վերափոխելու, կրողներին հեռացնելու առումով:

«Քարեփոխումները»

Խմբակցությունը ներկայացավ ի դեմս Արմեն Մարտիրոսյանի ու դեռ չէր կողմնորոշվել ընտրական օրենքի եւ Սահմանադրության առումով:

Առաջնային հոգսն այլ է 11 պատգամավորն էլ գործադիր իշխանություններում են: Այո, կա եւ առաջարկ նրանցից մեկին պաշտոն զբաղեցնելու, ուստի, «Քարեփոխումները» մոռացված խումբ չես համարի: Խումբն էլ, ոնց երեւում է, իրեն մոռացնել տալու մտադրություն չունի: Պատրաստվում են Աժ-ում «դիմավորել» կառավարության ծրագիրը: Պահանջելու է արդյունաբերության վերելքի իրական գործոններ եւ ապացույցներ, որովհետեւ գտնում է առանց արդյունաբերության վերելքի համախառն ներքին արտադրանքի աճով երկիր չի պահվի:

«Երկրապահ»

Ըստ ներկայացնող Ռազմիկ Մարտիրոսյանի պարզվեց, որ այս պատգամավորական խումբը «որակյալ մեծամասնություն» Աժ-ում չի կազմում եւ նրա ծնունդը չի կարելի կապել Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հետ: Ըստ պրն Մարտիրոսյանի, դեռի «Երկրապահ» վաղուց կար պատգամավորների ձգտումը, որը դարձավ քաղաքական որոշում հայտնի քաղաքական ճգնաժամի նախօրեին:

Եղածը եղած է: Ըստ պրն Մարտիրոսյանի, այսուհետ ընտրությունները պետք է լինեն հերթական, Սահմանադրությունն էլ կարիք ունի փոփոխման: Բայց զգուշորեն քաղաքական ուժերի մասնակցությամբ:

«Շամիրամ» եւ «Հայրենիք»

Փառք Աստծո, որ այս խմբակցությունների ներկայացուցիչները չներկայացան, թե չէ «Ազգի» գլխավոր խմբագիրը վերջնականապես կընդոստանար այս ծավալուն լրատվության համար:

Աժ մամլո ծառայությունը մյուս հինգշաբթի թող հոգա տվյալ շաբաթվա կարեւոր հարցի մասին: Չէ՞ որ ճեպազրույցները կազմակերպվում են մամուլում տեղեկությունները հաղորդելու համար:

Իմ կարծիքով, պետք է ղեկավարվել մի գերազանց սկզբունքով՝ լավ է քիչ, քան երբեք:



ԿՈՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ասոն Մանուկյան. Խոսափող եւ քաղաքացի

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Ասոն Մանուկյանը խոսում է չափազանց արագ: Ըստ երեւույթին բնավորության գիծ է:

Երեկ տված ասուլիսում նա խոստացավ լինել թափանցիկ, ինչպես ամբողջ կառավարությունը: Նա հին պատրաստակամությամբ ու «նոր» միջավայրում խոսում էր քարտ լեզվով՝ քարտ գաղափարների մասին:

Նախ՝ այսուհետ, ամեն հինգշաբթի օրը ՀՀ կառավարության նիստերից հետո, հրավիրվելու է ճեպազրույց նախարարներից որեւէ մեկի, որոնք դեպքերում նաեւ ՀՀ վարչապետի հետ: Սա ի նշան կառավարության գործունեության, այսպես կոչված թափանցիկության, շենքի տուֆը փոխարինվում է ապակիով: Բացի այդ, կառավարական հեռախոսները (երկու հեռախոսահամար) դառնալու են առավել քան քաղաքային, հասանելի է հասուկ կաղ վարչապետի գրասենյակի հետ, որից եւ կարող է օգտվել յուրաքանչյուր քաղաքացի՝ հուզող հարցերի պարզաբանման կամ լուծման նպատակով: Ավելին, ՀՀ կառավարությանը կից ստեղծվելու է կադրերի բանկ, ուր կարող է դիմել ամեն քաղաքացի, ով կարծում է, որ կարող է լավ եւ օգտավետ աշխատել այս համակարգում:

Երեկ՝ ապրիլի 16-ին, ՀՀ կառավարությունում անցկացվեց առաջին նիստը՝ Արմեն Դարբինյանի վարչապետության օրոք: Քննարկվել է 18 հարց, էներգահամակարգի (մշակվելու է սակագների կայունացման ծրագիր, տարբերակվելու են հոսանքի ցերեկային եւ գիշերային օգտագործման դիմաց սահմանվելիք գները, ջերմային էլեկտրաէներգիայի սպառողները հնարավորություն են ստանալու նաեւ ոչ կանխիկ մուծումների եւ այլն), հարկային քաղաքականության (հարկեր են գանձվելու նաեւ միջազգային ծրագրերի իրականացման շրջանակներում Հայաստանում գործող կազմակերպություններից եւ անձնակազմի աշխատակիցներից), տնտեսական եւ այլ հարցերի վերաբերյալ: Ի դեպ, կառավարության նոր կազմի մասին միայն թե շատ լուրջ կերպով կարելի է կարծիք կազմել միայն ապրիլի 20-ից հետո, երբ «կհրապարակվեն արդյունքները»: Իսկ մինչ այդ ՀՀ նախագահը եւ վարչապետը ամենօրյա հանդիպումներ են ունենում՝ քննարկելով նաեւ այդ խնդիրը:

Մանուկյանի խոսքը եւ ասելիքը ենթադրում էր բազմազան հարցեր: Հետաքրքիր էր իմանալ եւ տեղեկացնել մեր բնակչությանը հեռախոսահամարների մասին կամ գեթ մի փոքր տեղեկություններ հայտնել (կամ ենթադրություններ) կառավարության նոր կազմի վերաբերյալ: Այնուամենայնիվ, խոսելով կես ժամ, նա ընդամենը 420 վայրկյան հատկացրեց լրագրողներին (հարցերի համար) եւ հետո այնպիսի արագությամբ իր ուղեկցի հետ սլացավ դահլիճից, որ ասուլիսը, գոնե լրագրողներիս ակնկալության տեսանկյունից, չստացվեց:

ԱԲԻՍ ԳԱԼՍԹՅԱՆ

«Տաղան» էկո-ակումբը ծառատունկ է անցկացնում

«Տաղան» էկո-ակումբը 1998 թ.-ի փետրվարին Հոլանդիայի գյուղատնտեսության նախարարությունից գրանտ ստացավ «Պահպանվող տարածքների երթ-98» միջազգային ծրագրի շրջանակներում երեւանում եւ նրա սահմանամերձ տարածքներում ապրիլի 18-22-ը 800 պտղատու եւ դեկորատիվ ծառերի ծառատունկ անցկացնելու համար: Այս մասին «ԱՈԿԱ» գործակալությանը ասաց էկո-ակումբի նախագահ Հրանտ Սարգսյանը: Ծառատունկը անցկացվելու է Աբովյանի ընտանեկան մանկատան տարածքում, ՆԳ եւ ԱԱՆ բարձրագույն դպրոցի տարածքում, Չեյթուն թաղամասում, Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տարածքում: Ինչպես ասաց Հ. Սարգսյանը, «Տաղան» էկո-ակումբը երկրորդ անգամն է երեւանում եւ սահմանամերձ տարածքներում անցկացնում «Պահպանվող տարածքների երթ» միջազգային ծրագիրը: Էկո-ակումբը, բնության նախարարության եւ քաղաքաշինության աջակցությամբ, 1997 թ. ապրիլի 18-22-ը Եռաբլուրի անտառային հատվածում եւ Հրազդանի կիրճում տնկեց շուրջ 400 ծառատեսակ: «Այս տարի նույնպես որոշված էր ծառատունկ կազմակերպել Եռաբլուրի անտառահատվածում եւ Հրազդանի կիրճում, սակայն գարնանը կատարելով դիտարկումներ, որոշեցինք ձեռնպահ մնալ այս տարի այդ տարածքներում ծրագրած ծառատնկումներից խնամքի եւ պահպանման աշխատանքների անբավարարության, տարածքի ոռոգման խնդիրների չլուծման, Եռաբլուրի պանթեոնին կից տարածքի իրավական տիրոջ բացակայության պատճառով եւ Եռաբլուրի եւ Հրազդանի կիրճի անտառատարածքներում շուրջ 500 ծառերի եւ թփերի տնկման աշխատանքները տեղափոխել եւ իրականացնել պահպանվող ու խնամվող տարածքներում», ասաց Հ. Սարգսյանը:

ԱՈԿԱ

«Ազգ» թերթի խմբագրությանը

Հարգելի խմբագիր,

Աժ կառավարությանը տրված հարցուպատասխանի ժամանակ, ծանոթանալով Աժ վերահսկիչ պալատի 1997 թ. հաշվետվությանը, խոր մտահոգված լինելով մեր պետության արտաքին պարտքի եւ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) առկա համամասնությամբ եւ ստացվելիք վարկերի նպատակային օգտագործման հարցով, հրապարակել եմ, որ հիշյալ հաշվետվության 3.1 տեղեկանքում զետեղված համաձայնագրերով ստորագրված վարկերը կազմել են 1233137 հազար դոլար (1,2 մլրդ դոլար), որից օգտագործվել է 714283 հազար դոլար («Ազգ» թերթի ապրիլի 16-ի համարում տպվել է 794 մլն դոլար):

ՀՆԱ-ն 1997 թ. արդյունքով կազմել է 798555 մլն դրամ (1,6 մլրդ դոլար): Այստեղից հետեւում է, որ արտաքին պարտքի եւ ՀՆԱ համամասնությունը կազմում է 45 տոկոս (ինչպես եւ տպված է թերթում): Այնուհետեւ, հաշվի առնելով վարկի սպասարկման տոկոսավճարները՝ 5-7 տոկոս, կարելի է պնդել, որ այդ համամասնությունը մոտենում է 50 տոկոսին (մինչդեռ «Ազգ» թերթում սխալմամբ տպագրվել է 60 տոկոս):

Ինչպես հայտնի է, նշված համամասնության 50 տոկոսն անցնելը վկայում է տնտեսության անդառնալի ճգնաժամի (կոլապսի) մասին:

Ինչ վերաբերում է կրթության վարկին (ավելի ճիշտ՝ «Դասագիրք-98» ծրագրի համար՝ Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող վարկին), ապա ես իմ հարցում ընդգրկեցի նաեւ այդ վարկն օգտագործելու նախագծերում եւ համապատասխան մրցույթն անցկացնելիս տեղ գտած խոշոր թերությունները, ինչը եւ կազմել է Աժ-ի 10 պատգամավորների ՀՀ վարչապետին ուղղված գրավոր հարցադրման բովանդակությունը (ի դեպ, այդ հարցադրման պատասխանը դեռ չենք ստացել):

ՎԱՀԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ՝
Աժ պատգամավոր

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նյութերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ՈՍԿԵՓԱՑԻԿ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սիրիան նշում է անկախության տարեդարձը

Այսօր Սիրիայի Արաբական Հանրապետությունը նշում է ազգային անկախության 52-րդ տարեդարձը: Օսմանյան կայսրության փլուզումից հետո Սիրիան անցավ Ֆրանս-բրիտանական, հետագայում Ֆրանսիական մանդատի տակ, իսկ 1946-ին Ֆրանսիական վերջին զինվորի հեռացումով, Սիրիայի Արաբական Հանրապետությունը համարվեց անկախ պետություն: Հայ-սիրիական հարաբերությունների բարյացակամությունն ու շահագրգռվածությունը պայմանավորված է ավանդական բարեկամական կապերով: 1915 թ. ցեղասպանությունից հետո 300.000-ից ավելի հայ փախստականներ էջվեցին Սիրիայի անապատներ, որոնց մեծ մասն ապաստան գտավ Սիրիայի հովանու ներքո: Սիրիայի անկախության տարեդարձին նվիրված «Ազգը» նախընտրեց հանդիպել նաեւ ՀՀ ԱԳ նախարարության Մերձավոր եւ Միջին Արեւելքի բաժանմունքի արաբական երկրների եւ Իսրայելի բաժնի առաջին քարտուղար, Սիրիա-Լիբանան-Հորդանան երկրների հետ հարաբերությունների հարցերով զբաղվող Անահիտ Թովմասյանին:

Նշանակվեց Դավիթ Հովհաննիսյանը եւ մինչ օրս շարունակում է ներկայացնել Հայաստանի շահերը Սիրիայում: 1993 թ. Հալեպում բացվեց նաեւ ՀՀ գլխավոր հյուպատոսությունը, որով Սիրիայում Հայաստանն ունեցավ դիվանագիտական երկու ներկայացուցչություն, ինչը վկայում է հայ-սիրիական հարաբերությունների զարգացման մեծ կարեւորության մասին: Բոլոր ասպարեզների վերաբերյալ ստորագրված են ժամանակ համաձայնագրեր, փոխնախարարական ծրագրեր ու հուշագրեր, որոնք հիմք են տալիս ասելու, որ ստեղծված է համագործակցության անհրաժեշտ իրավական դաշտ:

1997 թ. աշնանը ՀՀ կառավարության օժանդակությամբ Հայաստանում բացվեց Սիրիայի դեսպանատուն եւ ՀՀ-ում Սիրիայի գործերի հավատարմատար նշանակվեց Համիդ Հասանին:

Այս տարի սպասվում է Սիրիայի կրթության նախարարության պատվիրակության այցը: Ամեն տարի Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի ուսանողները վերադասակարգով: Սիրիայի խորհրդարանում ընդգրկված է մեկ ներկայացուցիչ: Գործում են մարզական, մշակութային միություններ, բաներախմբեր, երգչախմբեր:

Հայկական մշակույթը բազմիցս ներկայացվել է Սիրիայում կազմակերպվել են ազգային եւ ռաժեստության հայկական ֆիլմերի շաբաթներ, նկարիչների ցուցահանդեսներ:

Սակայն է հասագործակցություն նաեւ տրանսպորտային ոլորտում: Հայկական ավիաուղիները չվերթներ են կատարում Հալեպ միաժամանակ: Դամասկոսի հետ ծրագրված է նաեւ «Սիրիական ավիաուղիների» թռիչք Հայաստան: Գործում է նաեւ Վրաստանով ցամաքային ճանապարհը, որն իրականացնում են հայկական կողմի տրանսպորտային եւ սիրիական «Կրանակ» ընկերությունները: Հայ մասնագետները մեծ աջակցություն են ցուցաբերում Սիրիայի երկաթգծի վերանորոգման, դահեստամասերի մատակարարման, ինչպես նաեւ Դամասկոսի մետրոյի նախագծման աշխատանքների ուղղությամբ:

Ներկայումս հայ-սիրիական առեւտրատնտեսական ոլորտը մեծ դժվարությունների հետ է կապված, որի հիմնական պատճառներից մեկը Թուրքիայի կողմից շրջափակումն է: ՀՀ-ի եւ Սիրիայի վարչապետների հանդիպման արդյունքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել ստեղծելու միջկառավարական հանձնախումբ, որոնք տարին 1-2 անգամ հանդիպելու եւ քննարկելու են երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները, տրվելու են կոնկրետ հանձնարարականներ:

Քննարկման ընթացքում է նաեւ կապիտալ ներդրումների խրախուսման մասին համաձայնագիրը, որը հավանաբար կստորագրվի ոչ աղագայում:

Հաստատված է խորհրդարանական երկկողմ բարեկամություն նաեւ Դամասկոս-Երեւան Հալեպ-Արարատ բաղաքների միջեւ: Փոխայցելություններ են կատարվում բաղաքապետարանների եւ գահանգաղեստարանների մակարդակով եւ հասագործակցությունն առավել խորացնելու ուղիներ են որոնվում:

Սերտ հասագործակցություն կա նաեւ գյուղատնտեսության եւ սեյսմիկ ծառայության ոլորտներում, որ դարբերաբար կատարվում է փորձի փոխանակում, դասախոսությունների ընթերցում, գիտաժողովներ:

Երեւանում այս տարի սպասվում է սիրիական աղրանքների ցուցահանդեսի բացում, որը սակայն նախատեսված էր դեռեւս երկու տարի առաջ եւ ձգձգվում էր փոխադրումների դժվարությունների պատճառով մինչ օրս:

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ըստ Գառնիկ Նանագուլյանի, առեւտրի ոլորտում դեռեւս կան լուծման կարոտ շատ խնդիրներ

Ապրիլի 16-ին «ՍԻԼ Պլազա» առեւտրի կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը հաջորդած ճաշկերույթից հետո, ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Գառնիկ Նանագուլյանը պատասխանելով լրագրողների հարցերին, մասնավորապես նշեց, որ Երեւանի կենտրոնում նման կառույցները պարտադիր են, քանի որ հենց դրանք պետք է լինեն մայրաքաղաքի դեմքը: «Ընդհանրապես յուրաքանչյուր մայրաքաղաք կամ մեծ քաղաք առանձնանում է առաջին հերթին լավագույն, բարձրակարգ աղրանքներով լի խանութների ու սրահների առատությամբ», ասաց պրն Նանագուլյանը: Նախարարը լավատեսորեն հույս հայտնեց, որ առաջիկայում քաղաքի խանութներում տեղ կգտնեն նաեւ տեղական աղրանքներ, իսկ տեղական արդյունաբերության զարգացումը մեծապես կախված է հետագա ներդրումային քաղաքականությունից: «Ազգի» այն հարցին, թե ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի տեղական գործարարներն իրենց փաղերը միայն առեւտրի եւ սպասարկման ոլորտում ներդնելուց բացի ներդրումներ կատարեն նաեւ արդյունաբերության բնագավառում, պրն Նանագուլյանը պատասխանեց, որ այդ քայլերն արդեն ձեռնարկվում են, սակայն առեւտրի գերարագ զարգացումը պետք է մոտ 20-30 տարի սպասեցնի: Հակասությունը էջեղ սրահների ու խանութների եւ տնտեսաճառների միջեւ դեռ երկար կշարունակվի: Մեր առաջիկա խնդիրը պետք է լինի քաղաքի կենտրոնը տնտեսաճառներից եւ առեւտրական հրապարակներից մաքրելը:

– Հնարավո՞ր է, որ նոր կառավարության ձեւավորումից հետո առեւտրի եւ արդյունաբերության նախարարությունը բաժանվի ըստ համապատասխան ոլորտների:

– Քանի դեռ ես նախարար եմ, այդ հասկ մտադրությունը դեռեւս չկա:

Իսկ իր, որպես նախարարի պատասխանատվության ժամկետների մասին մեր հարցին, պրն Նանագուլյանը գերադասեց չպատասխանել: Այսպես թե այնպես դա հայտնի կդառնա ապրիլի 20-ին նոր կառավարության կազմի հրապարակումից հետո:

«Հայաստանում հարստանալու ամենակարեւոր գրավականներից մեկը բնականոն բիզնեսի զարգացումն է», ասում է Ալբերտ Սուքիասյանը

Բնականոն տնտեսական կառույցները կամ այսպես կոչված կլանները ներկայումս աշխարհի շատ երկրների տնտեսական հիմքն են կազմում, մասնավորապես արեւելյան երկրներում, որտեղ դեռեւս մեծ դեր ու նշանակություն ունեն բնականոն ազգակցական ավանդույթները ու կապերը: Դրանք նաեւ հայերի ազգային մտածելակերպին բնորոշ հատկանիշներ են: «Հայաստանում հարստանալու ամենակարեւոր գրավականներից մեկը բնականոն բիզնեսն է» «Ազգի» թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց Ալբերտ Սուքիասյանը «ՍԻԼ» կոնցեռն բնականոն կառույցի եւ Սուքիասյանների հայրը: Այն հարցին, թե իրենց բնականիշում կա՞ «հայրեր եւ որդիներ» հակասությունը, նա պատասխանեց, որ ոչ, քանի որ ինքն իր չորս որդիներին տվել է ինքնուրույն աշխատելու լիակատար հնարավորություն, սակայն բնականիշում պահպանվում է հնուց եկած բնականոն ավանդույթը տարիքով մեծին լսելն ու հարգելը: Դա է, թերեւս, իրենց հաջողության պատճառներից մեկը: Ըստ հայր Սուքիասյանի 15 հոգանոց իրենց բնականիշն ապրում է միասին մեկ տանը՝ հաշտ ու համերաշխ: Հայրն բնականիշի ի դեղոգն ու ղեկավարն է, իսկ որդիներից յուրաքանչյուրն ունի իր տեղը, դերն ու պարտականությունը: Իսկ այն հարցին, թե ինչպե՞ս է կարողացել 63-ամյա գործարարը, որն աշխատել եւ դաստիարակվել է խորհրդային ժամանակաշրջանում, այդքան հեշտությամբ հարմարվել նոր տուկայական պայմաններին, պրն Սուքիասյանը պատասխանեց, որ ինքը դեռեւս խորհրդային տարիներին, երբ գլխավորում էր մի պետական ձեռնարկություն, զուգահեռաբար զբաղվել է նաեւ կոոպերացիայով (որի հնարավորությունը կար գորբաչովյան «պերեստրոյկայի» ժամանակաշրջանում) եւ անձնական բիզնեսով:

Հայաստանում բիզնեսի հաջողության մյուս երկու պայմաններ, ըստ Ա. Սուքիասյանի, հետեւյալն են

պետք է աշխատել խիստ կազմակերպված,

ստացված եկամուտները (անկախ իրենց ծավալներից) ոչ թե կուտակել, այլ դնել շրջանառության մեջ:

ՀՕՖ բարեգործության ամենաթարմ հասցեն՝ ՆԳՆ անչափահասների ընդունման-տեղաբաշխման բաժին

Երեկ, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Վիգեն Եղիկյանը եւ Ալեքսանդրոս Այֆազյանի եւ ՀՀ ՆԳ եւ ԱԱ նախարարության քրեական հետախուզության անչափահասների ընդունման-տեղաբաշխման բաժնի պետ Լեւոն Տեր-Հարությունյանի միջեւ պայմանագրի ստորագրմամբ մեկնարկեց ՀՕՖ հերթական բարեգործական նախաձեռնությունը՝ ընդունման-տեղաբաշխման կետի հիմնավոր վերանորոգումը: Թափառաշրջիկ, անօթեւան, խուլիգանության, գողության եւ այլ հանցագործությունների համար հասարակությունից ժամանակավորապես մեկուսացված, ըստ այդմ, ժամանակ առ ժամանակ այստեղ «հյուրընկալվող» երեխաներին կյանքի տանելի պայմաններով ապահովելուն ուղղված այս ակցիան իրականացնելու նպատակով, ինչպես տեղեկացավ Վիգեն Սրբազանից, կհատկացվի առնվազն 116 հազար դրամ (գումարը՝ կճշգրտվի շինարարական աշխատանքների ընթացքում): Շենքը, որ նախատեսված էր շուրջ 50 երեխայի համար, այս պահին բավական վիճակում է գտնվում: Տարական հարմարավետությունից (տարեկան այստեղ հանգրվանում է 250-300 երեխա): Շինարարական աշխատանքները կիրականացվեն 6-ամսյա ժամկետում: Նախապես հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված «Ջուրբեր» շինարարական միավորման կողմից: Վերջինիս տնօրեն Ժորա Խաչատրյանն «օգտվելով առիթից», գոհունակություն հայտնեց մրցույթի «մաքրությունից», որ, ըստ նրա, բնորոշ է բացառապես ՀՕՖ-ին: Միավորումը ՀՕՖ դասվերով եւ «գերազանց գնահատականով» իրականացրել է նաեւ Սուրբ Էջմիածնի Գեորգյան ճեմարանի վերանորոգումը: ՀՕՖ տնօրենն իր հերթին հույս հայտնեց, որ աշխատանքները կիրագործվեն «մեր փոքրիկներուն վայել»:

Լրագրողները տեղեկացան նաեւ, որ մոտ աղագայում կամարտվի Այնթապ գյուղի դպրոցի վերանորոգումը: Այսօր ՀՕՖ ղեկավարությունը կայցելի Գավառի մանկատուն, որ համակարգչային ուսուցման, գորգագործության հատուկ դասընթացներ են բացվելու երեխաների համար: Հաջորդ շաբաթ (երեքշաբթի) ՀՕՖ երթուղին կձգվի Օշական ուսումնասիրելու գյուղի ջրամատակարարման բնագիրը լուծելու հնարավորությունը:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Սիրիա

Ավելի քան 28 երկար տարիներ Արեւելքի հնագույն երկրներից մեկի, մարդկային քաղաքակրթության օրրաններից Սիրիայի ղեկավարն է Հաֆեզ Ալ-Ասադը: «Առյուծը» կամ «Աբու-Սուլեյմանը», ինչպես սիրում են հայրենակիցները կոչել իրենց «հորը», Սիրիայի Արաբական Հանրապետության ղեկավարն այդ բարձրագույն պաշտոնին տիրացել է տնաջան աշխատանքով, խիզախ քայլերով եւ անձնազոհ նվիրումով իր դավանած գաղափարին եւ հայրենիքին: Ծնված 1930 թվին Սիրիայի ծովամերձ Կորդահա ավանում (Լաթաքիայի նահանգ), մուսուլմանական ալավի

1967 թ-ի անփառունակ պարտությունից հետո, հունիսի 5-ի ահավոր պրեզգությամբ Սիրիայի «փետրվարյան» ղեկավարների վարկը խիստ ընկել էր: Նրանք 1969-70 թթ-ին ռազմական միջամտությամբ ի նպաստ պաղեստինյան հեղափոխության (Հորդանանում), փորձեցին վերադարձնել ժողովրդի վստահությունը: 1970 թ. նոյեմբերի 16-ին Հաֆեզ Ալ-Ասադը զինվորական հեղաբերջմամբ դարձավ Սիրիայի նախագահ եւ անմիջապես ձեռնամուխ եղավ վճռական ռազմաքաղաքական հարվածով սրբելու 1967 թ. խայտառակ պարտության ամոթանքը: Շնորհիվ Խ. Միության ղեկավարության, անձնապես Անդրեյ Գրեչկոյի եւ Համազասպ Բաբաջանյանի միջամտությամբ ստեղծվեց օդային կամուրջ, գաղտնի կերպով զինելու Սիրիան եւ ապա եգիպտոսը, որը նախապատրաստված էր վերադարձնելու Սուեզի ջրանցքի արեւելյան ափը: 1973 թ. հոկտեմբերի «Ռամադանի» պատերազմով Իսրայելի գոտոզ ղեկավարներ Մոշե Դայանը եւ Կոլդա Մայիրն ահարկու հարվածներ ստացան, սթիվելով մինչեւ իսկ օգտագործել ատոմային զենք գործածելու սպառնալիքը: Սիրիան իրեն վերադարձրեց Գոլանի բարձունքների մի մասը, մինչեւ Կոնեյտարա քաղաքը, իսկ Դամասկոսի երկնքում վար առնվեցին բազմաթիվ իսրայելական F-4 (Ֆանտոմ), «Սկայհոք» տիպի կործանիչներ ու ռմբաձիգներ ընտրիվ սովետական «Սեմ» երկիր-օդ հրթիռների:

Պատերազմից մի քանի տարի անց բռնկվեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Լիբանանի կառավարության հրավերով սիրիական զորքերը մուտք գործեցին Լիբանանի տարածք ու մայրաքաղաք: 1976-78 թթ-ին ժամանակավորապես կանգնեցնելով բախումներն աջակողմյան ու ձախակողմյան ուժերի միջեւ: Սակայն երբ Հաֆեզ Ալ-Ասադը մերժեց ստորագրել Անվար Սադաթի կողմին «Քեմփ Դեյվիդի» տխրահռչակ պայմանագիրը, Լիբանանի իսրայելամետ ուժերը հարձակում գործեցին սիրական խաղաղարար ուժերի եւ նրանց բնական դաշնակից... հայկական թաղամասերի վրա: Լիբանանի քաղաքացիական պատերազմը նորից բռնկվեց: 1982 թ. հունիսին իսրայելյան շուրջ 150.000-ի հասնող ծովային-օդային-ցամաքային ուժերը հարձակվեցին Լիբանանի վրա, ավերածության ու ջարդի ենթարկելով ազգաբնակչությանը: Յասեր Արաֆաթի քաղաքականության կտրուկ շրջադարձի միջոցով Սիրիան եւ Իրանը հնարավոր դարձրին Լիբանանի կառավարությունը սիրիական զորքերը մուտք գործեցին Լիբանանի տարածք ու մայրաքաղաք: 1976-78 թթ-ին ժամանակավորապես կանգնեցնելով բախումներն աջակողմյան ու ձախակողմյան ուժերի միջեւ: Սակայն երբ Հաֆեզ Ալ-Ասադը մերժեց ստորագրել Անվար Սադաթի կողմին «Քեմփ Դեյվիդի» տխրահռչակ պայմանագիրը, Լիբանանի իսրայելամետ ուժերը հարձակում գործեցին սիրական խաղաղարար ուժերի եւ նրանց բնական դաշնակից... հայկական թաղամասերի վրա: Լիբանանի քաղաքացիական պատերազմը նորից բռնկվեց: 1982 թ. հունիսին իսրայելյան շուրջ 150.000-ի հասնող ծովային-օդային-ցամաքային ուժերը հարձակվեցին Լիբանանի վրա, ավերածության ու ջարդի ենթարկելով ազգաբնակչությանը: Յասեր Արաֆաթի քաղաքականության կտրուկ շրջադարձի միջոցով Սիրիան եւ Իրանը հնարավոր դարձրին Լիբանանի քաղաքացիական պատերազմը դադարեցնելու եւ Լիբանանի ազգայնական ուժերը, որի պատճառով բազմահազար ազատամարտիկներ հայտնվեցին կալանավորի վիճակում:

Հաֆեզ Ալ-Ասադի կոչով եւ օժանդակությամբ Լիբանանում ծավալվեց անձնապահական ռազմական գործողությունների մի ամբողջ շարք, իսրայելական ուժերը: իրենց մայիսի 16-ի «դաշնագրով», դուրս շրջվեցին Բեյրութից ու Լիբանանի մեծ մասից: Ապա Սիրիայի նախագահի քաղաքական մտածված ու խորամանկ, փորձառու քայլերի միջոցով Լիբանանի կողող ուժերը ուժասպառ եղան, բոլորովին վարկաբեկվելով: 1992 թ. վերջերին սիրական ուժերը մուտք գործեցին Լիբանանի այլ շրջաններ եւս, վերջ տալով 1975 թ-ից ի վեր շարունակվող ավերածին պատերազմին: Եթե Հաֆեզ Ալ-Ասադը դժբախտություն ունեցավ կորցնելու իր որդուն Բասել Ալ-Ասադին առեղծվածային ավտովթարի պատճառով, ապա իր գործակիցները փոխնախագահներ Աբդ Ալ-Հալիմ Խադդամը, Զուհեյր Մասարեան, արտաքին գործոց նախարար Ֆարուք Ալ-Շարեհը, իր մյուս որդին Բասսար Ալ-Ասադը, շարունակում են մնալ ամրակուռ իրենց գաղափարների պաշտպանության համար:

Տնտեսական շրջափակումն ու դավերը մինչեւ այսօր էլ չկարողացան խախտել Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի հեղինակությունը: Նա միշտ էլ անգիջում է եղել ոչ միայն արտաքին քաղաքականության բնագավառում, այլեւ ներքին տնտեսական անկարգապահության, կաշառակերության դեմ պայքարում: Նույնիսկ իր ամենամոտ մերձավորներին պատժել է երկարաժամկետ կալանքով, երբ զգացել է, որ նրանք շահագործում էին իր անունն ու իշխանությունը:

Սպասելով դյուսվանոր «ազգի հաշտության» ու արդար խաղաղության: Սիրիայի ղեկավարը երկիրը տանում է 21-րդ դար որպես տարածաշրջանի հզորագույն երկրներից մեկը:

Նախագահ Հաֆեզ Ալ-Ասադ՝ մարդը, ռազմաքաղաքական գործիչը, ղեկավարը



փոխհրամասնության պատկանող ընտանիքում, երիտասարդ Հաֆեզ Ալ-Ասադը, իր սերնդի բազմաթիվ երիտասարդների նման տոգորված էր այդ տարիների արաբական ազգայնական զարթոնքի գաղափարներով: Նա սովորել է այն դպրոցում, որ կրում էր անձնապահական գործողության հեղինակ, նահատակ հերոս Ժոլ Ժամալի անունը, որը տարիներից կախվելով հարձակվել էր ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» մարտանավի վրա, 1956 թ-ի Սուեզի պատերազմին: Հաֆեզ Ալ-Ասադը, իր շրջանի չափավոր բազմաթիվ երիտասարդների նման, կամավոր մտավ ռազմաօդային նորակազմ ուժերի շարքերը, որոնք 1963 թ-ին, «Բաաս» կուսակցության իշխանության տիրանալուց հետո Խ. Միությունից եւ Չեխոսլովակիայից ստացան ԼԱ-38 ու 39, ՄԻԳ-15, ՄԻԳ-17 եւ ապա գերաժամանակակից ՄԻԳ-19 եւ ՄԻԳ-21 կործանիչներ ու բազմաֆունկցիոնալ մարտական ինքնաթիռներ: Սիրիայի [illegible] Հաֆեզ Ալ-Ասադն իր իսկ խոստովանությամբ վարել է ոչ միայն ուղղաթիռներ, այլեւ նույնիսկ ՄԻԳ-21-եր, շտապով դառնալով ռազմաօդային ուժերի գլխավոր հրամանատար եւ պաշտպանության նախարար:

կավարության, անձնապես Անդրեյ Գրեչկոյի եւ Համազասպ Բաբաջանյանի միջամտությամբ ստեղծվեց օդային կամուրջ, գաղտնի կերպով զինելու Սիրիան եւ ապա եգիպտոսը, որը նախապատրաստված էր վերադարձնելու Սուեզի ջրանցքի արեւելյան ափը: 1973 թ. հոկտեմբերի «Ռամադանի» պատերազմով Իսրայելի գոտոզ ղեկավարներ Մոշե Դայանը եւ Կոլդա Մայիրն ահարկու հարվածներ ստացան, սթիվելով մինչեւ իսկ օգտագործել ատոմային զենք գործածելու սպառնալիքը: Սիրիան իրեն վերադարձրեց Գոլանի բարձունքների մի մասը, մինչեւ Կոնեյտարա քաղաքը, իսկ Դամասկոսի երկնքում վար առնվեցին բազմաթիվ իսրայելական F-4 (Ֆանտոմ), «Սկայհոք» տիպի կործանիչներ ու ռմբաձիգներ ընտրիվ սովետական «Սեմ» երկիր-օդ հրթիռների:

Պատերազմից մի քանի տարի անց բռնկվեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը: Լիբանանի կառավարության հրավերով սիրիական զորքերը մուտք գործեցին Լիբանանի տարածք ու մայրաքաղաք: 1976-78 թթ-ին ժամանակավորապես կանգնեցնելով բախումներն աջակողմյան ու ձախակողմյան ուժերի միջեւ: Սակայն երբ Հաֆեզ Ալ-Ասադը մերժեց ստորագրել Անվար Սադաթի կողմին «Քեմփ Դեյվիդի» տխրահռչակ պայմանագիրը, Լիբանանի իսրայելամետ ուժերը հարձակում գործեցին սիրական խաղաղարար ուժերի եւ նրանց բնական դաշնակից... հայկական թաղամասերի վրա: Լիբանանի քաղաքացիական պատերազմը նորից բռնկվեց: 1982 թ. հունիսին իսրայելյան շուրջ 150.000-ի հասնող ծովային-օդային-ցամաքային ուժերը հարձակվեցին Լիբանանի վրա, ավերածության ու ջարդի ենթարկելով ազգաբնակչությանը: Յասեր Արաֆաթի քաղաքականության կտրուկ շրջադարձի միջոցով Սիրիան եւ Իրանը հնարավոր դարձրին Լիբանանի քաղաքացիական պատերազմը դադարեցնելու եւ Լիբանանի ազգայնական ուժերը, որի պատճառով բազմահազար ազատամարտիկներ հայտնվեցին կալանավորի վիճակում:

Հաֆեզ Ալ-Ասադի կոչով եւ օժանդակությամբ Լիբանանում ծավալվեց անձնապահական ռազմական գործողությունների մի ամբողջ շարք, իսրայելական ուժերը: իրենց մայիսի 16-ի «դաշնագրով», դուրս շրջվեցին Բեյրութից ու Լիբանանի մեծ մասից: Ապա Սիրիայի նախագահի քաղաքական մտածված ու խորամանկ, փորձառու քայլերի միջոցով Լիբանանի կողող ուժերը ուժասպառ եղան, բոլորովին վարկաբեկվելով: 1992 թ. վերջերին սիրական ուժերը մուտք գործեցին Լիբանանի այլ շրջաններ եւս, վերջ տալով 1975 թ-ից ի վեր շարունակվող ավերածին պատերազմին: Եթե Հաֆեզ Ալ-Ասադը դժբախտություն ունեցավ կորցնելու իր որդուն Բասել Ալ-Ասադին առեղծվածային ավտովթարի պատճառով, ապա իր գործակիցները փոխնախագահներ Աբդ Ալ-Հալիմ Խադդամը, Զուհեյր Մասարեան, արտաքին գործոց նախարար Ֆարուք Ալ-Շարեհը, իր մյուս որդին Բասսար Ալ-Ասադը, շարունակում են մնալ ամրակուռ իրենց գաղափարների պաշտպանության համար:

Տնտեսական շրջափակումն ու դավերը մինչեւ այսօր էլ չկարողացան խախտել Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի հեղինակությունը: Նա միշտ էլ անգիջում է եղել ոչ միայն արտաքին քաղաքականության բնագավառում, այլեւ ներքին տնտեսական անկարգապահության, կաշառակերության դեմ պայքարում: Նույնիսկ իր ամենամոտ մերձավորներին պատժել է երկարաժամկետ կալանքով, երբ զգացել է, որ նրանք շահագործում էին իր անունն ու իշխանությունը:

Սպասելով դյուսվանոր «ազգի հաշտության» ու արդար խաղաղության: Սիրիայի ղեկավարը երկիրը տանում է 21-րդ դար որպես տարածաշրջանի հզորագույն երկրներից մեկը:

«Բաաս» կուսակցության առաքելությունը արաբական աշխարհում եւ Սիրիայում

«Արաբական մեկ ազգ, որն ունի անմահ առաքելություն միացում, ազատություն, սոցիալիզմ»: Այսպիսին է արաբական «Բաաս» («Զարթոնք») կուսակցության կարգախոսը, որը 1963 թ-ին իշխանության տիրացավ Սիրիայում, ռազմաքաղաքական հեղաբերջմամբ, ապա եւ 1966 թ-ի «փետրվարյան» հեղաբերջմամբ իշխանության գլուխ բերեց նաեւ պաշտպանության նախարար Հաֆեզ Ալ-Ասադին նախագահ Նուրեդդին Աթասիի, Գամել Հուսեյնի եւ այլոց հետ: Իսկ 1970 թ-ի նոյեմբերյան «Բարեշրջգչական» («Ալ-հարաքաթ ալ թասհիհիյե») հեղաբերջմամբ նախագահ դարձավ նախկին օդաչու եւ հրամանատար Հաֆեզ Ալ-Ասադը: Մինչ Իրաքում, Սադդամ Հուսեյնն ու Մոհամեդ Հասան Ալ Բաքրը, տանկային շարասյունով «Բաաս» կուսակցությանը բերեցին երբեմնի Միջագետքի բարձրագույն իշխանության գլուխ:

Սիրիայի ասորի համայնքին պատկանող Միշել Աֆլակի սկսած շարժման ղեկավարներ, այն ժամանակվա ռազմական զերագույն հրամանատար Ամին Ալ-Հաֆեզը, ռազմական ակադեմիայի տնօրեն Հուսեյն Զիդանը եւ այլք կարողացան 1963 թ-ին տարալել Սիրիայի գեներալ Զահրեդդինի վարչակարգը, որն իր կարգին իշխանությունից հեռացրել էր Սիրիա-Եգիպտոս միացման գաղափարի հիմնադիրներին: Սիրիայում հզոր քաղաքական ուժեր էին նասերական արաբական սոցիալիստները, որոնք Եգիպտոսի տիրակալի ջերմագին երկրպագուներն էին ու



փորձեցին 1956 թ-ի Սուեզի խայտառակ ու անփառունակ նահանջից հետո միավորել արաբական աշխարհը Եգիպտոսի հովանու ներքո: Այդ ծրագիրը հովանավորում էր Խ. Միությունը, որն արաբական աշխարհի եւ Աֆրիկայի հզորագույն երկրին երկարամյա վարկերով տվեց ՄԻԳ-15 եւ Իլ-28 կործանիչներ ու ռմբարկուներ, տանկեր, սուզանավեր ու հրթիռաձակ ռազմանավեր: 1956-58 թթ-ին Իրաքում տարալվեց արեւմտամետ Նուրի Ալ-Սաիդի, Ֆայսալ թագավորի եւ թագաժառանգի վարչակարգը (Մեծ Բրիտանիայի գործակալներ), սակայն Սիրիան միացնելը Եգիպտոսին ձախողվեց:

Սիրիայի մյուս ուժեղ կուսակցությունը (կոմունիստները, Խալեդ Բեկդաշի գլխավորությամբ) անկարող գտնվեց իշխանությունն առնելու, սակայն «Բաաս» կուսակցությունը, որը ճանաչելի ընկավ ազգային սոցիալիզմի եւ արաբական աշխարհը միավորելու գաղափարներով, 1963 թ-ից մինչեւ այսօր, Սիրիայի իշխանությունն ամուր պահում է իր ձեռքում:

«Բաասը» ամբաստանվել է արեւմտյան պետությունների կողմից մարդկային իրավունքների խախտման, մեծաթիվ քաղաքանտարկյալների հարցերով: Սիրիան ու Իրաքը, ավատատեսական դարավոր ու դաժան ավանդույթներով, մուսուլմանական, իսմայիլական ծայրահեղական շարժումներով, որոնք սկիզբ են առել ու զարգացել այս երկրներում, կարող էին եւ կարող են քաղաքական եւ ազգային քաոսի վերածել երկրները: Սակայն լուսավորյալ, կրոնական եւ դավանական բաժանումների, ծայրահեղության եւ քաղաքացիական հավասարական վտանգների դեմ պայքարող «Բաասը» այսօր էլ գլխավոր պատվարն է արաբական աշխարհում ծավալվող արյան բաղնիքներ սարքող մուսուլմանական ծայրահեղականների ոտնձգությունների դեմ: Կրոնական զրոությունն առաջացնողները Սիրիայում խստորեն պատժվում են օրենքի սահմաններում: Իսկ 1978-80 թթ-ին, Արեւմուտքի եւ Իրաքի հետախուզական վարչությունների կազմակերպած Համա քաղաքի եւ Հալեպի արյունալի դեպքերը «Մուսուլման եղբայրներ»-ի կողմից, խստորեն ճնշվեցին: Սի խոսքով, արաբական ցեղախմբերը, ժողովուրդներն ու շարժումները հարգում եւ սիրում են ուժը, հզոր ղեկավարին: «Բաասի» իշխանության տարիներին Սիրիայում թե Իրաքում, միշտ էլ փոխհրամասնությունները հարաբերաբար աղրել են բարգավաճ վիճակում: անշուշտ խոսքը վերաբերում է հայերին ու մյուս քրիստոնյա համայնքներին:

«Բաաս» կուսակցության իրաքյան եւ սիրական- թեւերը, 1979 թ-ի խզումից հետո, այժմ ընթանում են դեպի վերամիավորում ընդդեմ թուրքական ռազմաքաղաքական ոտնձգությունների, Եփրատի ու Տիգրիսի «խաղաղ» հոսքի խափանման փորձերի, որոնք սկսվեցին «Աթաթուրք» ջրամբարակի կառուցումից հետո: Փաստորեն, օգտագործվելով արաբական այն երկրների դեմ, որոնք աջակցում են ինչպես Իրաքին, այնպես էլ արաբ եղբայրներին, որոնք գտնվում են «փոխհրամասնությունների երկիր» Թուրքիայում:

Թեեւ կուսակցության քաղաքական քարտեզում գծագրված է արաբական միացյալ աշխարհը Ատլանտյան օվկիանոսից Արաբական (Պարսից) ծոց, սակայն դեռ բավականին աշխատանքներ կան այդ մեծ երազը իրականություն դարձնելու

ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաֆեզ Ալ-Ասադն ու հայերը

Կիլիկիո տարագրյալ հայ ժողովրդի համար Սիրիան (պատմական Ասորիքը) եղել է փրկության լաստ՝ Մեծ եղեռնի դժնդակ օրերին: Բազմահազար հայ որբուկների մահվանից փրկել են ինչպես բեդվին (անապատաբնակ), այնպես էլ Հալեպի ու Դամասկոսի բարեգութ արաբները: Չե՞ որ նրանք էլ ճաշակել են օսմանյան բռնատիրության, հալածանքների ու կախաղանների դառը բաժակը՝ ձեռամբ Ջեմալ փաշա «Ալ-Սաֆահ»-ի («Արյունարբու»): Արաբները շատ լավ գիտեն, որ այդ գազանաբարո երիտթուրքին մահվամբ պատժել են հայերը: Ահա եւ այդ մութ օրերի իրադարձությունները. արաբական մեծ հեղափոխությունը, որն սկսվեց 1917 թ.-ին, «Շարիֆ» Հուսեյնի եւ որդիներ Ֆայսալի (Իրաքի ապագա թագավոր), Աբդալլայի (Հորդանանի ապագա թագավոր) եւ Ալիի (Հիջազի թագավոր) գլխավորությամբ, Մեծ եղեռնի անպատմելի օրերը, թուրք փաշաների ոճիրներն ու հալածանքները մանրամասնությամբ ներկայացվեցին Նեչդեդ Անզորի «Հողի եղբայրներ»-ում («Իխուան Ալ-Արդ»): Այն պատրաստվել էր նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի անմիջական հովանավորությամբ՝ որպես պատասխան Թուրքիայի եւ նրա դաշնակիցների անվերջ ոտնձգություններին ու դավերին արաբական աշխարհի դեմ:

Սիրիայի նախագահը մեծ հայասեր է: Նա այցելել է Հայաստան խորհրդային ժամանակներում: Եղել է առաջին օտարերկրյա բարձրագույն իշխանավորը, որ 1992-ին մեծ շուքով ընդունեց Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, ի ցույց Թուրքիայի, որի լրտեսական ինքնաթիռը խփել էին սիրական ռազմական կործանիչները մի քանի օր առաջ... Ընդունելության ճառում Հաֆեզ Ալ-Ասադը ասաց այն ամենը, ինչը չէր կարող ասել ամենախիզախ հայ քաղաքագետը: Ավելին, ազատ արձակվեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հետ կապ ունեցող բոլոր այն ազատամարտիկները, որոնք 1982 թ. Թուրքիայի ճնշման տակ «հյուրընկալվել» էին Սիրիայի դամասկոսամերձ «Մեզզե» կալանավայրում: Այո՛, 1992-ից սկսած, Սիրիան դարձավ Հայաստանի ու հայ ժողովրդի դաշնակիցն ու բարեկամը:

Հաֆեզ Ալ-Ասադի՝ իշխանության ղեկը ստանձնելուց հետո Սիրիայի հայերը փաստորեն ապրեցին իրենց ազգային, մշակութային, տնտեսական «ոսկեդարը»: Կրոնական անսահման ազատություններ հետ հայերին իրավունք տրվեց լայն կամուրջներով հաղորդակցվելու Հայաստանի հետ: Ավելին, հայ ժողովրդի Գողգոթա-դժոխք Տեր-Զորում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ (այժմ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա), Սիրիայի նախագահի բարեհաճ արտոնությամբ կառուցվեց մի ուխտավայր՝ հայոց նահատակների անքաղ ածյունների հայտնագործված վայրում: Այնտեղ, գրեթե ամեն շաբաթավերջին այցելում են բյուրավոր հայեր, Մերձավոր Արեւելքի թե տիյուռքի բոլոր հայ գաղթօջախներից:

Հաֆեզ Ալ-Ասադի մանկությունն ու պատանեկությունը անցել են Կորդահա ավանում, Լաթաքիա ծովամերձ հինավուրց քաղաքում, որտեղ եղել են բազմաթիվ հայեր՝ Մեծ եղեռնից մազապուրծ: Ապա իր զինվորական եւ քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում նա եղել է հայերի հետ՝ որոնք մինչեւ այսօր էլ Սիրիայի նախագահի մերձավոր գործակիցներն են: Շատ ու շատ հայ զինվորականներ եւ հասուկ զորքերի սպաներ ծառայել են Սիրիայի սահմանների պաշտպանության գործում: Մանավանդ որ, սիրական զինված ուժերի հզորացման գործում կարեւոր դեր են խաղացել գեներալներ Գարամանուկյանն ու Շակբազովը: Տակավին չենք կարող ամբողջությամբ հիշել Սիրիայի ծանր ու թեթեւ արդյունաբերության մեջ հայ գործարարների ու ճարտարարվեստականների խաղացած դերը: Արվեստի, գրականության, երաժշտության բնագավառներում նույնպես մեծ է հայերի դերը, որոնք միշտ էլ ամենալայն աջակցություն են ստացել Հաֆեզ Ալ-Ասադից: «Առյուծը» (Ալ-Ասադ-արաբերեն) մեծ հույսեր է կապում հայ ժողովրդի հետ, տարածաշրջանում խաղաղության եւ արդարության հաստատման աշխատանքներում:

Եջի նյութերը
Տատո Ղազարյանի

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Սիրիա

Սիրիայի զանգվածային լրատվամիջոցները

Սիրիայում տեղեկատվությունը գտնվում է պետության խիստ հսկողության ներքո եւ հովանավորվում է նրա կողմից: Երկրում տեղեկատվական դաշտը կարգավորում եւ վերահսկում է տեղեկատվության նախարարությունը: Զանգվածային լրատվամիջոցները իրենց գործունեությունը կարող են սկսել այս նախարարության թույլտվությունն ստանալուց հետո միայն: Ոչ տեղական տպագիր լրատվամիջոցները երկրում տարածվելու համար պարտավոր են նախարարության թույլտվությունից բացի, յուրաքանչյուր համարը ներկայացնել նախարարության կառույցում գործող գրաքննության բաժանմունքին ու ստանալ նրա համաձայնությունը: Հայերեն հրատարակությունների համար այս բաժանմունքում աշխատում են երկու սիրիահայեր:

Սիրիայում գործում է մամուլի տարածման միայն մեկ, պետական գործակալություն, որը, ի տարբերություն մեր «Հայմամուլի», աշխատում է շատ արագ ու զգալի շահույթով: Երկրի միակ լրատվական գործակալությունն է պետական «Սիրիայի արաբական լրատվական գործակալությունը» (անգլերենով «Սիրիան արաբ նյուզ էյջընսի, կրճատ ՍԱՆԱ): Նա ունի իր հենակետերն ու թղթակիցները արաբական եւ եվրոպական հանրային բոլոր երկրներում, ինչպես եւ Ասիայի, Աֆրիկայի ու Ամերիկայի ցամաքամասի շատ երկրներում:

Էլեկտրոնային լրատվամիջոցները պետության բացարձակ մենաշնորհն են: Հեռարձակվում են զուտ արաբերեն երկու հ մեկ օտարալեզու հանալերն եւ ֆրանսերեն հեռուստաալիքներ: Բացի այս երեքից, արաբերենով հեռարձակվում է նաեւ սիրիական արբանյակային հեռուստաալիքը աշխարհի բոլոր արաբների համար: Վերջինս հեռարձակվում է համաարաբական «Արաբսատ» արբանյակային ցանցի միջոցով: Այսուհանդերձ, երկրում, մասնավորաբար մեծ քաղաքներում լայն տարածում են գտել արբանյակային ալեհավաքները: Արտասահմանյան հեռուստակայաններից երկրում, մասնավորաբար ծովեզրյա (Թարթուս, Բանիաս, Լաթաքիա) եւ միջին գոտու քաղաքներում (Դարաա, Դամասկոս, Հոմս, Համա, Մաարա, Հալեպ) մեծ ժողովրդականություն են վայելում լիբանանյան «Էլ Բի Սի» եւ «Ալ-Մուստակբալ» («Ապագա») ոչ պետական հեռուստակայանները: Հյուսիսային գոտում (Քեսաբի, Հալեպի եւ Սիեգիրե-Գամիշլիի շրջաններ) ապրող հայերի մեծագույն մասը «գժվում է» թուրքական հեռուստակայանների համար...

Սիրիայում հեռարձակվում է միայն մեկ պետական ռադիոկայան արաբերենով:

Մինչեւ 90-ական թթ-ի սկիզբը, սիրիական տպագիր լրատվամիջոցները բացառապես պատկանում էին պետությանը կամ պետության անմիջական հսկողության ներքո գտնվող հրատարակչություններին, գրական, արհմիութենական եւ այլ մարմիններին: Վերջին տարիներին երկրում սկսեցին լույս տեսնել մի քանի ոչ պետական լրատվամիջոցներ, որոնք չեն բովանդակում քաղաքականությանն անմիջապես առնչվող նյութեր:

Սիրիայի տպագիր լրատվամիջոցներից մեծ տարածում ունեն արաբերեն լեզվով լույս տեսնող երեք օրաթերթերը: Դրանք են

«Ալ-Բաաս» («Վերածնունդ»): Երկրում իշխող Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության (ծանոթ է իր կրճատ «Ալ-Բաաս» անունով) պատասխանատուն է Շեբտադրումը թերթում ներկուսակցական եւ քաղաքական թեմաների վրա է:

«Ալ-Սաուրա» («Հեղափոխություն»): Լույս է ընծայում «Ալ-Ռահդա» («Միացում») հրատարակչությունը: Կառավարության փաստական պատասխանատուն է: Առավել ու շաղտություն է դարձնում սոցիալ-տնտեսական խնդիրներին:

«Թշրին» («Հոկտեմբեր»-կոչվել է 1973 թ-ի արաբ-իսրայելական պատերազմի ամսաթվով): Լույս է ընծայում համանուն պետական հրատարակչությունը: Համարվում է կառավարության ոչ պատասխանական բանբերը: Ունի ամենամեծ տարածումը երկրում: Ավելի լայն տեղ է հատկացնում միջազգային անցուդարձերին: Մերձավոր Արեւելքի ճգնաժամին ծանոթին ու մարգական կյանքին:

Երկրում բնակվող օտարների համար «Ալ Ռահդա» հրատարակչությունը լույս է ընծայում կառավարության դիրքորոշումներն արտահայտող «Սիրիա թայմս» («Սիրիայի ժամանակ») անգլերեն շաբաթաթերթը: Հայերեն ունեն հայերեն պարբերակներ (տեսնել ներքեւում): Ուրիշ լեզուներով պարբերականներ չկան:

Այս թերթերի տարածմանը մեծապես նպաստում է նրանց համեմատաբար ցածր գինը: 4-8 տպագրական մամուլ ունեցող այս թերթերը վաճառվում են 5-10 սիրիական ֆունտի (մոտ 50-100 դրամ) սահմաններում:

Բացի մայրաքաղաք Դամասկոսից, երկրի մյուս նահանգային կենտրոններից նահանգային օրաթերթեր ունեն Հալեպը («Ալ-Ճամահիր»-«Զանգվածներ»), Հոմսը («Ալ-Ուրուբե»-«Արաբականություն»), Համան («Ալ-Ֆիդաա»-«Զոհաբերություն») եւ Լաթաքիան («Ալ-Ռահդա»-«Միացում»): Կան նաեւ շրջանային այլ թերթեր:

Մարզասերների շրջանում լայն տարածում ունի «Ալ-Սաուկեֆ ալ-Ռիադի» («Մարզական դիրքորոշում») շաբաթաթերթը, որը լույս է ընծայում «Ալ Ռահդա» հրատարակչությունը:

Սիրիայի մյուս պարբերականներից համաարաբական կշիռ ունի արաբ գրողների միության անդամ (նախագահն է հայերի ջերմ բարեկամ Ալի Օկլա Օրսանը) «Ալ-Մաուկեֆ ալ-Ադաբի» («Գրական դիրքորոշում») հանդեսը:

Սիրիա մուտք են գործում արաբական եւ արտասահմանյան հարյուրավոր պարբերականներ: Ոչ արաբական պարբերականները լայն տարածում չունեն: համեմատաբար բարձր գների եւ երկրի արաբների ավանդույթներին հաճախ անհարիր բովանդակության պատճառով: Արաբական պարբերականներից մեծ ժողովրդականություն ունեն հարեւան Լիբանանի օրաթերթերն ու շաբաթաթերթերը, որոնք ընթերցողին են հասնում նույն օրը (Դամասկոս) կամ առավելագույնը հաջորդ օրը (մայրաքաղաքից դուրս): գրաքննության թույլտվությունն ստացվում է հատկացված ժամերի ընթացքում:

Մի քանի խոսք էլ սիրիահայ մերօրյա մամուլի մասին: Մինչեւ 60-ական թթ-ի կեսերը մեծ աշխուժություն ունեցած սիրիահայ մամուլը դադարեց քաղաքական պատճառներով: Մամուլը սահմանափակվեց ներդպրոցական պարբերականներով: Երկրի հայկական մամուլի դիմաց դրված կարմիր լույսը նարնջագույնի վերածվեց 1980 թ-ին: Մեծ դժվարությունների գնով այդ տարի Բերիո թեմի Առաջնորդարանին հաջողվեց ձեռք բերել պարբերականի հրատարակության արտոնություն:

Այսուհանդերձ, թեմի «Պարբերաթերթ» պատասխանատուն երկար կյանք չունեցավ ու մի քանի համար լույս տեսնելուց հետո դադարեց: 1993 թ-ին Առաջնորդարանն սկսեց լույս ընծայել «Գանձասար» շաբաթաթերթը (խմբագիր Խաչիկ Շահիկյան): Այն լույս է տեսնում շաբաթական կանոնավոր պարբերականությամբ: Ունի «Կյուր» մանկական ներդիր-հավելվածը: Շաբաթաթերթը գտնվում է ՀՅԴ-ի անմիջական ազդեցության տակ: Բացի «Գանձասարից», որոնք ինձ հայտնի է վերջին տարիներին լույս տեսնող հայկական մյուս պարբերականներն են «Գեղարդ» տարեգիրը եւ Քարեն Յեղոյի ազգային ճեմարանի «Ծիլեր» պարբերաթերթը (տարին 2-3 անգամ): Սիրիահայությունն իր հայկական տեղեկատվությունն առավելաբար ստանում է լիբանանահայ կուսակցական մամուլի շնորհիվ: 1-2 օրվա ուշացումով սիրիահայ (հիմնականում հալեպահայ) ընթերցողին են հասնում Բեյրութում հրատարակվող ՀՅԴ-ի «Ազդակ», ՌԱԿ-ի «Զարթօնք» եւ ՍԴՀԿ-ի «Արարաս» օրաթերթերն ու լիբանանահայ համայնավարների «Կանչ» շաբաթաթերթը: Սիրիահայությունը հաղորդակից է դառնում նաեւ Բեյրութում հրատարակվող Հայկական ժողովրդային շարժման «Ափյուռք» պարբերականին, Ժիրայր Նաիրիի (Թոսունյան) խմբագրած «Նաիրի» երկշաբաթաթերթին, «Նոր կեանք», «Դիտակ» ամսագրերին ու այլ պարբերականների: Լիբանանահայ պարբերականները իրենց էջերում տեղ են հատկացնում սիրիահայ գաղութի կյանքին: մինչեւ 1990 թ. «Զարթօնք» օրաթերթը նույնիսկ ուներ շաբաթական պարբերականությամբ լույս տեսնող «Հալեպահայութեան էջը» ներդիրը:

Մեր կարծիքով, սիրիահայ մամուլի վերազարթոնքին այսօր հիմնականում խոչընդոտում է համապատասխան կադրերի պակասը: Իխանությունների բարյացակամ վերաբերմունքը երկրի հայ քաղաքացիների նկատմամբ, ինչպես եւ գաղութի համեմատաբար բարվոք ֆինանսա-տնտեսական վիճակը նպաստավոր պայմաններ են ստեղծել սիրիահայ մամուլի վերածննդի համար: Հուսով ենք, որ չի ուշանա:

ԳԵՎՈՐԳ ՅԱՍՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Թուրքիա-Իսրայել ռազմական համագործակցությունը մեծ վտանգ է

Սկիզբը էջ 1

Քաղաքական եւ տնտեսական այս փորձի կիրառումով Սիրիան դարձավ առանձնահատուկ: Նա սկսեց ընթանալ քաղաքական եւ տնտեսական վերափոխումների ճանապարհով ավելի վաղ, միեւնույն ժամանակ պահպանելով անհատի սոցիալական ապահովագրությունը, անվճար ուսումը բոլոր մակարդակներում եւ անվճար բժշկական ծառայությունը: Այս բոլորով Սիրիան ստանձնեց մի առաջատար դեր, որն էլ ամրապնդեց նրա դիրքը տարածաշրջանում եւ աշխարհում:

– Նաթանյահուն վերջերս առաջարկում է հետ քաշել Իսրայելի զորքերը Լիբանանի հարավից, ինչպիսի՞ն է մի կողմից Սիրիայի եւ մյուս կողմից Սիրիա- լիբանանյան համատեղ դիրքորոշումն այս հարցի շուրջ: Ի՞նչ ասելիք է հասել խաղաղության գործընթացը տարածաշրջանում:

– Խաղաղության գործընթացը կանգ է առել այն ժամանակվանից, երբ Նաթանյահուն եկավ իշխանության գլուխ: Գործընթացը մտել է փակուղի Իսրայելի կառավարության քաղաքականության, ագրեսիվ դիրքորոշումների եւ այն փորձերի պատճառով, որոնցով խուսափում է կատարել այն պահանջները, որոնք անհրաժեշտ են գործընթացի հետագա զարգացման համար: Այդ առումով հատկապես անհրաժեշտ է առաջնություն տալ Մադրիդի կոնֆերանսին եւ պահպանել «տարածքները խաղաղության դիմաց» սկզբունքը:

Այն, ինչ որ ասվել է Լիբանանի հարավից Իսրայելի ետ քաշվելու մասին, իսրայելական նոր մանեւր է խուսափելու համար խաղաղության գործընթացի իսկական ուղուց եւ միեւնույն ժամանակ խուսափելու միջազգային հանրության ճնշումներից, որը անհանգստացած է Իսրայելի բացասական դիրքորոշումից խաղաղ գործընթացի վերաբերյալ: Դա նաեւ խուսափում է 242, 338 եւ 425 բանաձեւերի կիրառումից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 425 բանաձեւը Լիբանանի հարավի մասին պահանջում է Իսրայելի հետ քաշվելը առանց որեւէ պայմանի, եւ այդ բանաձեւը ընդունվել է մոտավորապես 20 տարի առաջ եւ Իսրայելը մինչեւ օրս չի կատարել: Եթե Իսրայելը իրոք մտադիր է, ապա թող դուրս հանի իր ագրեսոր զորքը լիբանանյան հողերից առանց որեւէ պայմանի, եւ սա կլինի ամենաճիշտ ձեւը 425 բանաձեւի կատարման հարցում: Բայց, ինչպես նշեցի, Իսրայելի դիրքորոշումը մանեւր է միայն, որի նպատակն է Լիբանանը մտցնել բանակցությունների մի քունելի մեջ, որը կերկարի անվերջ, առանց որեւէ արդյունքի: Այդ բոլորին գումարվում են անընդունելի պայմաններ, որոնք պարտադրվում են Լիբանանին ծեւականորեն ետ քաշվելու դիմաց: Միեւնույն ժամանակ Իսրայելը փորձում է Սիրիայի եւ Լիբանանի խաղաղ գործընթացի ուղղությունները բաժանել իրարից, որպեսզի կարողանա առանձին գործ ունենալ Լիբանանի հետ, որը ուժեղ է Սիրիայով, եւ Սիրիայի հետ, որը ուժեղ է Լիբանանով: Դա փորձ է նաեւ, լիբանանյան ազգային դիմադրությունը, որպեսզի Լիբանանին զրկի ուժի այն գործոններից, որ նա ունի եւ որոնց վրա է հենվում Լիբանանի դիրքորոշումը:

Ինչ վերաբերում է Սիրիայի դիրքորոշմանը, ապա նշեմ, որ Սիրիան սկզբից եւեթ ընդառաջել է տարածաշրջանի հակամարտությանը ամերիկյան եւ միջազգային խաղաղ, արդար եւ ամբողջական լուծում տալու նախաձեռնություններին: Այդ դրական արձագանքն էր, որ հնարավոր դարձրեց ամբողջ գործընթացը, որը մեր կարծիքով պետք է հենվի Մադրիդի կոնֆերանսի, «տարածքները խաղաղության դիմաց» սկզբունքի կիրառման, սիրիական Գոլանի բարձունքներից (վերականգնելով 1967 թ. հունիսի 4-ի սահմանները), Լիբանանի հարավից եւ գրավյալ մյուս արաբական տարածքներից Իսրայելի զորքերի դուրսբերման վրա:

Սիրիայի դիրքորոշումը պարզ է: Նա բազմիցս հայտարարել է, որ միշտ պատրաստ է վերսկսել եւ շարունակել խաղաղ գործընթացը այն կետից, որտեղից կանգ է առել: Նա հայտարարել է նաեւ, որ խաղաղությունը Սիրիայի համար ռազմավարական ընտրություն է:

– Վերջերս Թուրքիայի եւ Իսրայելի հարաբերությունները ամրապնդվել են հատկապես ռազմական ասպարեզում, ինչպիսի՞ դեր է կատարում Սիրիան արաբների ջանքերը միավորելու ասպարեզում ընդդեմ այդ համագործակցության:

– Իրականում համայն աշխարհին հայտնի դարձավ, որ թուրք-իսրայելական հարաբերությունները վերջերս հեռու գնացող եւ վտանգավոր բնույթ են կրում: Ռազմական համագործակցությունը եւ ռազմական դաշինքը նրանց միջեւ տարածաշրջանի բոլոր ժողովուրդների մեջ անհանգստություն առաջացրեց, հատկապես համատեղ զորավարժություններից հետո, որոնք տեղի ունեցան Միջերկրական ծովում վերջերս: Այդ զորավարժությունները վտանգ էին ներկայացնում տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների համար: Դա հանգեցրեց տարածաշրջանում լարվածության մեծացմանը, չնայած առանց այն էլ լարվածությունը կա այնտեղ Իսրայելի կողմից արաբական հողերի զավթման հետեւանքով:

Իհարկե, այս ռազմական համագործակցությունը Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ մեծ վտանգ է հատկապես Սիրիայի անվտանգության համար: Այդ պատճառով Սիրիան մեծ ջանքեր թափեց Արաբական երկրների լիգայի, Իսլամական կոնֆերանսի գագաթաժողովի եւ այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում ցույց տալու համար իսրայելա-թուրքական դաշինքի վտանգավոր հետեւանքները: Շնորհիվ Սիրիայի ջանքերի իսլամական կոնֆերանսի վերջին գագաթաժողովը, որը տեղի ունեցավ Թեհրանում, որոշումներ ընդունեց այս կապակցությամբ: Արաբական երկրների լիգան նույնպես որոշումներ ընդունեց այդ հարցի շուրջ, դրանք ինքնադատում են դաշինքը եւ պարզաբանում նրա վտանգները տարածաշրջանի ժողովուրդների եւ պետությունների անվտանգության եւ ապագայի համար:

– Ի՞նչ կարող եք ասել Սիրիայի հայկական գաղութի եւ արաբա-հայկական հարաբերությունների ամրապնդման մասին ընդհանրապես:

– Սիրիա-հայկական բարեկամական հարաբերությունները շատ ամուր են եւ նրանց արմատները ձգվում են պատմության խորքերը: Երկու ժողովուրդները վաղուց եւ մոտիկից են ճանաչում միմյանց: Այս դարասկզբին հայերի դեմ գործադրված օսմանյան կոտորածների ժամանակ Սիրիան բացեց իր դռները հայերի առջեւ եւ օգնեց նրանց փրկվելու: Սիրիան նախագահ Հաֆեզ Ասադի նախաձեռնությամբ մարդասիրական օգնություն ցույց տվեց Հայաստանին վերջինիս պատահած դժբախտությունների եւ բնական աղետների ժամանակ:

Սիրիայի ազգությամբ հայ քաղաքացիները մեծ դեր են կատարում երկրի տնտեսական, հասարակական եւ մշակութային կյանքում եւ դրականորեն մասնակցում հայրենիքի կառուցմանն ու զարգացմանը: Այս դերը փոխադարձ եւ բարեկամական հարգանքի զգացումներ է առաջ բերում հայերի եւ արաբների միջեւ:

– Ձեզ է հատկացվել ՀՀՇ նախկին նստավայրը, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի կառավարության այս քայլը: Ե՞րբ եք տեղափոխվելու այնտեղ:

– Հայաստանի կառավարության նախաձեռնությունը: Բաղրամյան պողոտայում շենք հատկացնել Սիրիայի Արաբական Հանրապետության դեսպանությանը, մեր կողմից շատ բարձր է գնահատվում եւ համարվում է մի գեղեցիկ քայլ հայ ժողովրդի կողմից Սիրիայի նկատմամբ: Մենք այժմ վերանորոգման աշխատանքներ ենք կատարում այնտեղ հայկական տեղական մի ընկերության միջոցով: Կարծում եմ, որ երկուսուկես ամսից կավարտվեն աշխատանքները եւ մենք կտեղափոխվենք դեսպանության նոր նստավայր:

Հարցազրույցը վարեց
ՎԱՀԱՆ ՕՍԻՊՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«Բացարձակ սեւ մարմնից» ճառագած լույսը

«Ազգ»-ի անդրադառնում է իր գրադարանին վերջերս ընծայված գրքերից մեկին

Ս եւ, թանձր մշուշների խորքում ծիածաններ նշմարել եւ այդ ծիածաններից բերվածը նախ հոգում եղածին շաղախել եւ առա բառ ու տողին: Անհնարինը հնարավոր արա, եւ թող ճերմակ էջից սերը խոսի: Կալանված սիրո փրկագինը քո ոգու ճշմարիտ, անհավակնոտ պատմություն ու կենաց փորձությունը թող լինի ծիածաններից պեղված քո խոտը: Շնչիր ու շունչդ պահիր այնպես, որ արտաշնչածդ օդում որքան հնարավոր է քիչ ծանրանա: Եվ այդ ճիշտ ընչելը հենց ինքը ճշմարիտ գրականությունն է: Լավին, բարուն աղավինող, անհուսությունից պրկվող հոգիներին թեթեւություն բերող վպվերական գիրը: Խոսքը այս պարագայում Մեսրոպ Հարությունյանի «Բացարձակ սեւ մարմին» խորագրված այս ժողովածուին է վերաբերում: Երիտասարդ արձակագիրը (ժամանակի առումով) կարճ տարածքի վրա ակնկալիից շատ ավելին է շահել: Իսկ այն, ինչ կայացած է (իսկ այս գիրքն այդպիսին է անտարակույս) կայացել է անխաբար ջանքով, անվիաս համառությամբ ու անվրեպ մի ներքնատեսությամբ: Գիտության կարծրատիպերից դաղվել են գեղարվեստական խորհրդանիշ միավորներ, որոնք էլ գեղարվեստական խոսքի ոլորտում ներկայելով այս գրքի հեղինակը ստեղծագործական իր ճանապարհը հարթելու յուրօրինակ փորձ է ձեռնարկել: Հասնել հոգեբանական նրբենագույն բացահայտումների, մարդ էակի ներաշխարհը ճնշության առնել անսովոր դիտանկյուններից, ահա այն ծրագրային գերխնդիրը, որն իր առջեւ դրել է հեղինակը: Փորձը փորձ, բայց այդ փորձի գնահատականը հենց իրենք են, առերեւույթ եսակենտրոն թվացող այս պատումների մեջ իրենց գոյը հաստատող շիտակ, լիարյուն ու հավատավոր կերպարներն են: Ուրի սիրտը սերն է, եւ Մեսրոպ Հարությունյանը խստակեաց մի սիրո հավատանով է անցկացրել իր խոհն ու ասելիքը, որ իր խոսքի նշանը ժամանակի ու տարածության պատահականության ֆոնից չերկնչի: «Իսկ հիմա մնացյալն անցյալի ոստայնի մեջ է եւ դանդաղ սահում է նրա հետեւից դեպի նրա բույնը: Ես հիմա շարժվում եմ...»: Գրողաբար կարողացիր մարդկային ոգեղենիկ արժեքները ամենահաս շարժման ռիթմերում տեղակայել այնպես, որ պատմություն դարձող կյանքը մեզ ներկայանա լույսի ծննդյան ծիսակարգի հանգույն: Եվ Մեսրոպ Հարությունյանը կարողացել է: Այո, սա գրականության այն տեսակն է, որտեղ պանծացվում է շարժումը: Իսկ շարժումը ամենաանել իրավիճակում անգամ ուղեծիր է բացում: Տոկա, մաքառիր, քո արթուն երազը տար, անցկացրու ողջակիզող ցավի կրակարաններով այնպես, որ քո խոսքից արցունքի հոտ չգա, եւ այն ծանրին թեթեւություն բերի, եւ կարանքազերծ սիրտը ժպտա հաշտ ու անքեն: Թերեւս այդպիսին է «Բացարձակ սեւ մարմին» խորագրով այս գրքի հավատո հանգանակը: Այն բեռը, որ Մեսրոպ Հարությունյանը գրողաբար վերցրել է իր անկոր ուսերին, դժվարին մի զառիվեր է հաղթահարելու եւ կես ճանապարհին չի մնալու հաստատակամ: Չինական ասացվածքը հիշեցնում է. «Հազար մղոնանոց ճանապարհը սկսում է առաջին քայլից»: Իսկ առաջին քայլն արված է եւ արված է անվարան: Եվ անհնարին է անտեսել այն բարդ ժամանակը, որի միջնակներում ստեղծվել է այս գիրքը: Ակնհայտ է, որ այս գրքի խորերում եռեփվում է նաեւ վաղվա գրույցը, հետեւաբար մեր օրերից դուրս ենք հայտարարված: Բայց այս գրքով (եւ նման գրքերի ծնունդներով) է եւ լեցվելու մեր լինելիության բագում սեւ խոռոչներ: Եվ թող որ մեզ սթափեցնող մի պահի մեջ այն ցավը իր թեւերը տիրաբար տարածի, որից վարանքի ու մգլանքի հոտ չի փչում: Սենք մեզ մեր ծայնի տիրակալն ենք կարգել այն հույսով, որ այն չի կերկերա բազում որոտընդոստ ծայների հարեւանությամբ միայն: «Չայն բազմաց ծայն Աստծո»: Եվ Մեսրոպ Հարությունյանը աստվածային ծայնի իր ելեւէջը հայտածելու իր փորձն է փորձում, եւ այստեղ համակամ են գրական ճաշակն ու կենաց փորձությունը: Եղածը հավելվում է նաեւ լինելիքի ակնկալիքով, բայց այս գիրքն իր տվածի մեջ իսկ հուսադրող է, ամրացնող ու վավերական: Ու թե սիրո գարկերակը բաբախում է համաչափ, տարածությունը չափվում է անդարագիծ լայնք ու խորքով, իսկ ժամանակը գոյում է հավերժության նշանի ներքո:

«Գիրքը տալ, ծխացող խղճի խորանարդածեւ մասն է», ասում է Պասքալը, եւ ինչ հրաշալի է, որ Մեսրոպ Հարությունյանին մանկան սրտի չափ զգայուն մի խիղճ է տրված, եւ այն բառ ու գրի հմայանքով տարածվում է ամենքի ու ամեն ինչի վրա:

Սույն պարագայում տիեզերքի պտույտը անուրանալի է, բայց շատ բան կանխորոշելու է այն, ինչը շնորհաբերելու է գրողական ճակատագիրը: Ու թող այն համակիր ու համարժեք լինի նրա չարչարանաց արդյունքին: Այո, պատահում է այնպես, որ բացարձակ սեւ մարմինը կլանելու տեղակ, լույս, ջերմություն եւ կենսական էներգիա է արտահեղում: Ոգեշահ ջերմություն եւ մաքուր լույս: Եվ «Բացարձակ սեւ մարմին» խորագրված այս գիրքը հենց նման դիպվածի արգասիք է...

ԱՐՏԱՇԵՍ ՂԱՖԱՐՅԱՆ

ՄԵՐ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԵՐԸ

«Ազգ»-ի ցուցասրահ



Արտաշես Հունանյանը ծնվել է 1922 թվին, Սոչիի շրջանի Ծաղկաշեն գյուղում, մահացել է 1995 թ. Ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գրաֆիկական բաժինը:

Նրա արվեստին բնորոշ է բնության, իրերի եւ երեւույթների խորքը թափանցելու ուժը եւ աշխարհը բանաստեղծորեն ու փիլիսոփայորեն ներկայացնելու ձգտումը:

ԲՐԻՏԱՆԻԱ

Լոյդ Վեբերը դարշավ 50 տարեկան

Ապրիլի 7-ին լոնդոնյան հայտնի Ռոյել Ալբերտ Հոլ շքեղ համերգասրահում տեղի է ունեցել պաշտոնական մի հանդիսություն՝ նշելու լորդ Լոյդ Վեբերի ծննդյան 50-ամյակը: Ներկա են եղել երաժիշտ կատարողների եւ հանրահայտ անձնավորությունների մի ստվար բազմություն, որոնք աշխարհի տարբեր վայրերից Լոնդոն են ժամանել մեծարելու մեր ժամանակների մեծագույն երաժիշտներից մեկին: Ըստ որոշ լուրերի, այդ խմբի մեջ են եղել երաժշտի նախկին կինը՝ Սարա Բրայթմանը, եղբայրը՝ թավջութակահար Ջուլիենը, դերասան Անտոնիո Բանդերասը եւ երգչուհի Բոնի Թայլերը: Հայտնի դերասանուհի Գլեն Քլոուզը բեմի վրա երգել է նրա պատվին: Բոլոր կատարողներն էլ հնչեցրել են անվանի երաժշտի հին ու նոր երգերը: Միջոցառման եկամուտները, ըստ «Դեյլի թելեգրաֆ» թերթի հաղորդումների, տրամադրվելու են Բրիտանիայի երիտասարդական երաժշտության ազգային թատրոնին:

«Ես իրոք շատ եմ հուզված՝ տեսնելով բեմի վրա այսքան շատ կատարողների: Զգացված եմ, որ իմ բարեկամներից եւ գործընկերներից շատերն իրենց թանկ ժամանակից բաժին են հանել նաեւ ինձ եւ պատշտանում են ազգային երիտասարդական թատրոնի նման մի հրաշալի նախաձեռնություն, որն ինձ համար շատ թանկ է», նշել է հեքիաթարը, որի 50 ամյակը լրացել է իրականում մարտի 22-ին: Ավելացնենք, որ Վեբերի «Whistle down the wind» երաժշտական ներկայացումը հուլիսի 1-ին ներկայացվելու է Լոնդոնի Օլդրիջ թատրոնում: Նրա նախկին «գլուխգործոցներից» են «Հիսուս Քրիստոս գերաստղ», «Էվիտա», «Կատուներ», «Օպերայի ուրվականը» եւ այլ ստեղծագործություններ:

Ն. Օ.

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Լողալ «Տիտանիկ»-ով

Միլիարդատեր Քըրք Քըրքորյանի կինոստուդիան՝ MGM Studios-ը համարյա ավարտել է իր վերջին ֆիլմի նկարահանումը, որտեղ գլխավոր դերը խաղում է ամենաբահուքաբեր գեղարվեստական ֆիլմի՝ «Տիտանիկի» գլխավոր դերակատար Լեոնարդո Դի Կապրիոն: Փարատանքի եւ Ֆոքսի համատեղ աշխատանքը՝ «Տիտանիկը», ամենածախսոտ ֆիլմն է, սակայն նաեւ բոլոր ժամանակների ամենաբահուքաբեր ֆիլմը:

Վերլուծաբաններն ու ֆինադատները համոզված էին, որ 200 մլն դոլար «խլած» սիրո պատմությունը կխորտակի ստուդիաները, բայց խորտակված նավի պատմությունը ոչ միայն միանգամից գրավեց շահութաբերության բոլոր գագաթները, այլեւ ներկայացվեց 14 Օսկարի:

Քըրքորյանի ստուդիան փորձում է օգտվել Դի Կապրիոյի ծագող հռչակից եւ շուտով կթողարկի հաջորդ ֆիլմը նրա մասնակցությամբ՝ Դյումայի դասական վեպի հիման վրա նկարահանված «Երկաթե դիմակով մարդը»:

Դի Կապրիոն գլխավոր դերն է խաղացել նաեւ նորօրյա «Ռոմեո եւ Ջուլիետ»-ի վերջին կինոտարբերակում:

AIM ամսագրից թարգմանեց
Ռ. ԱՇՈՏՅԱՆԸ



digitised by A.R.A.R.@

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Շիրակն» ամրապնդում է դիրքերը

Հայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի 6-րդ տուրում ոչ հաճելի «ռեկորդ» գրանցվեց: Չորս խաղերից երեքն ավարտվեցին ոչ-ոքի, այն էլ 0-0 հաշվով: Այդպիսի արդյունք գրանցվեց **«Շիրակ-2»-«Ղարաբաղ»**, **«Էրեբունի-ՀՄՄ»-«Փյունիկ»**, **«Երեւան»-«Արարատ»** հանդիպումներում:

Հետաքրքիր է, որ վերջին զույգը մի քանի օր առաջ հանդիպել էր հանրապետության գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչում: Այդ խաղում «Երեւանը» վստահ հաղթանակ էր տարել 3-0 հաշվով: Այս անգամ հանդիպումն անցավ հավասար պայքարում: Երկու թիմերն էլ հաշիվը բացելու հնարավորություններ ունեցան, սակայն այդպես էլ դարպասներն անաբիկ մնացին:

Գավաթային խաղում մի քանի օր առաջ հանդիպել էին նաեւ **«Ցեմենտն»** ու **«Շիրակը»**: Սուր պայքարում դաշտի տերերը Արարատի «Ցեմենտի» ֆուտբոլիստներն էին: 1-0 հաշվով պարտության էին մատնել մրցակիցներին: Առաջնության խաղը, որն անցկացվեց Գյումրիում, նույնպես հետաքրքիր ընթացավ: Թիմերը գեղեցիկ, հստակ խաղ ցուցադրեցին: Առաջին խաղակեսն ավարտվեց 0-0 հաշվով, սակայն երկու թիմերն էլ գոլային պահեր ունեցան: Ավելի ակտիվ էին «Շիրակի» ֆուտբոլիստները: Արժե հիշատակել Արթուր Պետրոսյանի, Հենրիկ Բաղիկյանի վտանգավոր հարվածները: Սակայն «Ցեմենտի» խաղացողները եւս սուր հնարավորություններ ստեղծեցին: Դարպասը գրավել կարող էին արարատցիներ Տիգրան Հովհաննիսյանը, Կարեն Ասատրյանը, սակայն հիանալի խաղ ցուցադրեց «Շիրակի» դարպասապահ Արթուր Հովհաննիսյանը:

Երկրորդ խաղակեսի սկզբից անցել էր 15-20 վայրկյան, երբ Բաղիկյանը մոտավորապես 22-23 մետր հեռավորությունից ուժգին հարվածով գրավեց «Ցեմենտի» դարպասը: Արարատի ֆուտբոլիստները խաղը սկսեցին կենտրոնից, սակայն շիրակցիները անմիջապես խլեցին գոնդակը եւ 4-5 փոխանցումով հասան մրցակցի տուգանային հրապարակին: Գնդակը հասցեագրվեց հարմար դիրքում գտնվող Սամվել Նիկոլյանին, եւ «Շիրակի» ավագը հմտորեն կրկնապատկեց խաղի հաշիվը: Մեկ րոպեում երկու գնդակ բաց թողնելը կարծես սառը ցնցուղ էր «Ցեմենտի» խաղացողների համար: Համարյա քառորդ ժամ նրանք կարծես թե ուշքի չէին գալիս: Իսկ 62-րդ րոպեին նրանց նոր տհաճություն պատճառեց շիրակցի Արթուր Պետրոսյանը, որը մտնելով տուգանային հրապարակ, մոտ տարածությունից սուր անկյան տակ խփեց 3-րդ գոլը: Որքան էլ տարօրինակ թվա դրանից հետո խաղը հավասարվեց: Վերջին 15 րոպեներն անցան «Ցեմենտի» առավելությամբ: Արարատի ֆուտբոլիստները 4-5 հնարավորություն ունեցան «Շիրակի» դարպասը գրավելու, սակայն դա միայն մեկ անգամ հաջողվեց նրանց: «Հեղինակության գոլը» 85-րդ րոպեին խփեց Վահրամ Հովհաննիսյանը: «Շիրակը» հաղթեց 3-1 հաշվով եւ ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքերը: Գյումրիի թիմը առաջնության միակ մասնակիցն է, որը ոչ մի միավոր չի կորցրել:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	6	6	0	0	17-2	18
2. Էրեբունի	6	4	1	1	11-2	13
3. Ցեմենտ	5	4	0	1	11-3	12
4. Երեւան	6	2	1	3	8-7	7
5. Արարատ	4	1	2	1	2-3	5
6. Փյունիկ	5	1	2	2	4-8	5
7. Ղարաբաղ	5	0	3	2	2-7	3
8. Շիրակ-2	5	0	1	4	0-14	1
9. Դվին	4	0	0	4	2-11	0

Այսպան տարբեր խաղեր

Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչի պատասխան հանդիպումները

Եվրոպական ակումբային թիմերի ամենահեղինակավոր մրցաշարում Չեմպիոնների լիգայում եւս անցկացվեցին կիսաեզրափակիչ փուլի երկրորդ խաղերը:

Դրանցից մեկում, որտեղ հանդիպեցին Սոնտե Կառլոյի **«Մոնակոն»** եւ Թուրինի **«Յուվենտուսը»**, ամեն ինչ պարզ էր: Բանն այն է, որ երկու շաբաթ առաջ կայացած առաջին խաղում իտալացիները հաղթել էին 4-1 հաշվով եւ, իհարկե, 3 գնդակի տարբերությունը չափազանց մեծ առավելություն է:

Խաղի 14-րդ րոպեին «Յուվենտուսի» խաղացող Նիկոլա Ամորուզոն գրավեց Ֆրանսիայի չեմպիոնի դարպասը: Սակայն դրանից հիշ անց Լեոնարդոն մոտ 25 մետրից տուգանային հարվածով հավասարեցրեց հաշիվը: «Մոնակոյի» ֆուտբոլիստները կարող էին մի քանի անգամ գրավել «Յուվենտուսի» դարպասը, սակայն հաջող էր խաղում իտալական թիմի դարպասապահ Անջելո Պերուցցին: Հանդիպման երկրորդ կեսում նույնպես «Մոնակոն» ոգեշնչված գեղեցիկ խաղ ցուցադրեց: 50-րդ րոպեին պատանի Տյերի Անրին առաջ մղեց իր թիմին: Սակայն հանդիպման ամենագեղեցիկ գոլը խփվեց 74-րդ րոպեին: Ստանալով աջ եզրից կատարած փոխանցումը «Յուվենտուսի» առաջատար Ալեսանդրո դել Պիերոն ընթացքից շեշտակի հարվածով գրավեց մրցակցի դարպասը: Պիերոն Չեմպիոնների լիգայի 9 խաղում խփել է 10 գնդակ եւ այդ մրցաշարի ռմբարկուն է: Վերելով խաղացող ֆրանսիացիները շարունակում էին գրոհել, եւ 83-րդ րոպեին փոխարինման դուրս եկած Ռոբերտ Շոթեխան հաղթանակ բերեց «Մոնակոյին» 3-2: Չնայած արդյունքին, երկու թիմերն էլ արժանացան բարձր գնահատականի:

Յորգ Հայերիխը («Բորուսիա») այս անգամ էլ չկարողացավ գրավել Բորո Իլգների պաշտպանած դարպասը

Մյուս կիսաեզրափակիչը «Բորուսիա» (Դորտմունդ)-«Ռեալ» (Մադրիդ) հանդիպումը այդքան դիտարժան չէր: Իսպանացիները, որոնք իրենց դաշտում հաղթել էին 2-0 հաշվով, նպատակ էին դրել պահպանել ձեռք բերած առավելությունը եւ հազվադեպ հակագրոհների էին դիմում: Հիշատակության արժանի է «Ռեալի» պաշտպան, բրազիլացի Ռոբերտո Կառլոսի տուգանայինից կատարած հուժկու հարվածը: Իսկ «Բորուսիայի» ֆուտբոլիստները, թեեւ խաղային առավելություն ունեին, իրենց ուղղագիծ գրոհներով առանձնապես մեծ հոգսեր չէին պատճառում մրցակիցներին: Անդրեաս Մյոլերն ու իր խաղընկերներն այս անգամ այնքան էլ նման չէին իրենց: Առանձին դեպքերում էլ իր վարպետությունը ցուցադրեց «Ռեալի» գերմանացի դարպասապահ Բոդո Իլգները (հատերը նշեցին, որ այս խաղից հետո նա Գերմանիայի հավաքական վերադառնալու լավ հնարավորություններ ունի):

Այդպես էլ հանդիպումն ավարտվեց 0-0 հաշվով եւ Չեմպիոնների լիգայի խաղարկության եզրափակիչ մտավ «Ռեալը»: Ընթերցողներին հիշեցնենք, որ Մադրիդի ակումբը 6 անգամ նվաճել է եվրոպական Չեմպիոնների գավաթը (վերջին անգամ հեռավոր 1966-ին):

Իսկ այս խաղարկության եզրափակիչում «Յուվենտուսն» ու «Ռեալը» կհանդիպեն Ամստերդամի «Արենա» մարզադաշտում, մայիսի 20-ին:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Առաջին արդյունքները

Հայաստանի կանանց առաջնությունը, որին մասնակցում են 5 թիմեր, անցկացվում է երկու շրջանով, չորս փուլով:

Մայրաքաղաքի «Գրանդ» ակումբի մարզադահլիճում սկսված առաջին փուլի երկօրյա հանդիպումներում այսպիսի արդյունքներ են գրանցվել. Գ. Գյումրի-«Պոլիտեխնիկ» (Երեւան) 60-90, «Ավարայր» (Արարատ)-ՖԻՄՍ (Երեւան) 80-74, Գ. Գյումրի-«Ավարայր» 53-95, ՖԻՄՍ-(«Գրանդ» (Երեւան) 59-79:

Ինչպես երեւում է, այս անգամ եւս հանրապետության չեմպիոնի կոչման համար պայքարը հիմնականում կընթանա նախորդ առաջնության հաղթող «Գրանդ» ակումբի եւ երկրորդ մրցանակակիր «Ավարայրի» բասկետբոլիստուհիների միջեւ:

Այսօր կմրցեն «Պոլիտեխնիկ»-«Ավարայր» եւ «Գրանդ»-Գ. Գյումրի զույգերը: Իսկ առաջին փուլի խաղերը կավարտվեն կիրակի օր՝ ապրիլի 19-ին:



Առանց դափնիների

Վենետիկում անցկացված սուպերամարտի ախտահի երիտասարդական առաջնությունից երեւան վերադարձան մեր հանրապետության երեք ներկայացուցիչները՝ ծկասուսերակիր Մանվել Մանվելյանը, խոցասուսերակիր Արմեն Նավասարդյանը եւ թրասուսերակիր Գեւորգ Բաղալյանը: Ցավոք, մեր երեք սուսերամարտիկներն էլ առաջին փուլում անհաջողության մատնվեցին եւ դուրս մնացին հետագա պայքարից:

Գեղասահքի Հայաստանի հավաքականի մարզիչ Սամվել Խաչատրյանը, որը վերադարձել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Մինեապոլիս քաղաքում անցկացված ախտահի առաջնությունից, հայտնեց, որ պարային զույգերի մրցումներին մասնակցած Քսենյա Սմեսանենկոն եւ Սամվել Գյոզալյանը 38 զույգերի պայքարում գրավել են 27-րդ տեղը, իսկ մեր հանրապետության մեկ այլ ներկայացուցիչը՝ մենասահորդ Արմեն Ասոյանը, նախավարժանքի ժամանակ վնասվածք ստանալով, մրցապարեզ չի մտել:

ԹԵՆԻՍ

Դեքսի գավաթի որակավորման մրցախաղերը

Լոնդոնում գտնվող բենիսի միջազգային ֆեդերացիայի շտաբ-բնակարանում անցկացվեց Դեքսի գավաթի որակավորման մրցախաղերի վիճակահանությունը:

Սեպտեմբերի 25-27-ը կայանալիք մրցախաղերում կհանդիպեն Ճապոնիա-Ռուսաստան, Ավստրալիա-Ուզբեկստան, Բրազիլիա-Ռումինիա, Չեխիա-ՀԱՀ, Իսրայել-Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա-Հնդկաստան, Հոլանդիա-Էկվադոր եւ Արգենտինա-Սլովակիա զույգերը:

Հաղթող թիմերը կընդգրկվեն ախտահի 16 ուժեղագույնների թվում եւ եկող տարի կբարունակեն պայքարը պատվավոր մրցանակի համար:

ՀՈԿԵՅ

Վլադիմիր Յուրզինովի հոգսերը

Ռուսաստանի հոկեյի ֆեդերացիայի գործադիր կոմիտեն ազգային հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակել Վլադիմիր Յուրզինովին: Նա աշխատում է Ֆինլանդիայում, ՏՊՍ թիմի գլխավոր մարզիչն է: Հիշեցնենք, որ նա Ռուսաստանի հավաքականը գլխավորում էր Նագանոյի 18-րդ ձմեռային օլիմպիական խաղերում:

Հավաքականի թեկնածուների թվում են Ռուսաստանի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի, Ֆինլանդիայի եւ Չեխիայի ակումբներում հանդես եկող ավելի քան 30 հոկեյիստներ:

Այժմ ՌԴ թիմը, ուսումնամարզական հավաքից հետո, ընկերական հանդիպումներ կանցկացնի Շվեյցարիայում, այդ երկրի հավաքականի հետ, այնուհետեւ կմասնակցի Շվեդիայում անցկացվելիք միջազգային մրցաշարին: Հենց այդ խաղերում էլ կփորձարկվեն թեկնածուները:

Վլադիմիր Յուրզինովը հույս ունի, որ իրեն կհաջողվի հավաքականում ընդգրկել նաեւ հոկեյի ազգային միության (NHL) ռուս լեգեոնականներին:

Փորձառու մարզչին անհանգստացնողը ժամանակն է: Նա վախենում է, որ Շվեյցարիայում կայանալիք ախտահի առաջնությունում իրենք սխրված կլինեն հանդիսատեսից հանդես գալ, ինչպես Նագանոյում: Ինչպես ասում է Յուրզինովը, «Իհարկե, խնդիրներ ունեն նաեւ Չեխիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի հավաքականների մարզիչները, բայց նրանց մոտ դրությունը համեմատաբար լավ է, քանի որ այդ թիմերի կազմերը վաղուց են կայունացել»:



Փարիզ-Ռուբե ավանդական հեծանվավազքի 226 կիլոմետր տարածությունում հաղթող դարձավ իտալացի Ֆրանկո Բալերինին, որը ցույց տվեց 6 ժամ 57 րոպե արդյունք

digitised by A.R.A.R.@

Օրվա հեռանկար

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Աժ աշխատաոճային բարեփոխումներ

Դրա ապացույցն են բազմաթիվ այն ձեռնարկումները, որոնք կյանքի են կոչվել Աժ նախագահ Խոսրով Հարությունյանի կողմից եւ հայտնի դարձան լրագրողներին Աժ մամլո քարտուղար Վահագն Մկրտչյանի ճեպազրույցի շնորհիվ:

Օրինակ, Աժ խմբակցությունների եւ պատգամավորական խմբերի դերը խորհրդարանական կյանքում բարձրացնելու նպատակով Աժ նախագահը թե ներքին խնդիրներում՝ օրենսդրական հարցերով, եւ թե արտաքին հարաբերություններում խորհրդակցում է Աժ բոլոր քաղաքական ուժերի հետ: Խորհրդակցությունների ինստիտուտի հիմնումը կարեւոր քայլ էր խորհրդարանի հավասարակշիռ տեսակետը այս կամ այն խնդրի վերաբերյալ պարզելու առումով: Նույն նպատակով եւ որպես հետադարձ կապ Աժ նախագահին իր բոլոր հանդիպումների եւ այցերի գրառումները ուղարկում է խմբակցությունների եւ խմբերի ղեկավարներին, որպեսզի իրազեկ լինեն Աժ ղեկավարության քաղաքական եւ պետական գործունեությանը:

Հաջորդ, շատ կարեւոր խնդիրը խորհրդարանական լսումների ինստիտուտի արժեքավորումն է: Այստեղ առկա է օրենսդրական լրացումներ անելու անհրաժեշտություն, քանի որ պառլամենտարիզմի նման դրսեւորումը մեզ մոտ կանոնակարգված չէ:

Հանձնաժողովների արտագնա նիստերը եւս նորույթ են: Դա հնարավորություն է տալիս տեղում ծանոթանալու շատ հարցերի, ապահովելու ընդունված օրենքների կիրառության մասին լիարժեք տեղեկատվություն եւ, որ շատ կարեւոր է, ապահովելու հետադարձ կապ ընտրողների հետ:

Նման փորձ արվեց պետահրավական հարցերի հանձնաժողովի կողմից: Արտագնա նիստ կայացավ Վանաձորում եւ Սպիտակում, արդյունքները գոհացուցիչ են: Եղան շատ դիմում-բողոքներ քաղաքացիների կողմից, որոնք ուսումնասիրվում են:

Ընդհանրապես Աժ նախագահը մտադիր է լուրջ վերլուծության ենթարկել Աժ-ին հասցեագրված դիմում-բողոքները, որից ելնելով նաեւ կկատարվեն օրենսդրական ճշգրտումներ:

Ըստ պրն Մկրտչյանի, արդեն կիրառվում է եւ պետք է շարունակվի օրենքների փորձաքննությունը միջազգային փորձագետների եւ քաղաքական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ստանձնելով պատասխանը, Խոսրով Հարությունյանը հիմնական խնդիրներ դրեց կարեւորագույն խորհրդարանական գործունեության բնագավառում: Անհրաժեշտ էր նոր որակ հաղորդել հասարակայնության հետ խորհրդարանի կապերին, վերագնահատել քաղաքական ուժերի դերն ու նշանակությունը խորհրդարանական կյանքում, պատգամավորների օրինաստեղծ աշխատանքը, որքան կարելի է, մոտեցնել հասարակությանը, ունենալ հետադարձ կապեր:

Բացի այդ, Աժ եւ կառավարության միջեւ նախարարների նոր կաբինետի ձեւավորումից հետո կստորագրվի մի հուշագիր:

Արդեն իսկ ձեռք է բերվել պայմանավորվածություն միջազգային վարկային պայմանագրեր ստորագրելիս բանակցային փուլում Աժ-ին մասնակից դարձնելու հարցում: Դա կօժանդակի Աժ-ում այդ հանձնաժողովների վավերացմանը եւ հետագա վերահսկողության ապահովմանը:

Ըստ պրն Մկրտչյանի, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ լուրջ համակարգման կարիք կա արտաքին քաղաքականության բնագավառում: Այդ առումով ներկայումս նախապատրաստվում է հուշագրի տեքստ Աժ-ի եւ ԱԳՆ-ի միջեւ, որով ձեռք է բերվում պայմանավորվածություն նախնական խորհրդաժողովների անցկացման, տեղեկատվության փոխանցման եւ այլ հարցերով:

Հայտնեմ, որ արդեն կատարվում է օրենսդրական աշխատանքի պլանավորում, ինչը դյուրին կդարձնի պատգամավորների, Աժ-ում հավատարմագրված լրագրողների աշխատանքը, եւ այն քաղաքական կազմակերպությունների, որոնք ներկայացված չեն Աժ-ում, բայց արդեն իսկ պետք է ներգրավվեն օրինաստեղծ գործընթացին, կօգնեն ժամանակին ապահովել մասնակցությունը:

Ինչ մնում է լրագրողներին... Կարծես թե Աժ-ում իրոք մտահոգված են բարձրացնել խորհրդարան-ՁԼՄ-ներ համագործակցության արդյունավետությունը: Դրական միտումը հաստատեց ոչ միայն «ճեպազրուցային» հինգշաբթին, այլ նաեւ այն հանգամանքը, որ լրագրողներիս բաժանվեց յոթերորդ նստաշրջանի օրենսդրական գործունեության ծրագիրն ու Խոսրով Հարությունյանի միջազգային մակարդակով հանդիպումների օրացույցը: Պրն Մկրտչյանը հավաստիացրեց, որ հանդիպումների ժամանակ ակնկալվում է նաեւ լրագրողների ներկայությունը:

Այնպես որ, մնանք սպասող...

Ա. Ա.



Երգիծանկարում պատկերված է ՈԱԿ «Բեյրութի խմբակը», որ արդեն 1995 թվից շարունակում է արկածախնդիր վարքով «առաջնորդել» արդեն քանդվող իր ավտոբուսը դեպի անդունդ:

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Հայաստանի մասնաճյուղը հայտարարում է մրցույթ

ՖՈՏՈԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի նպատակն է օժանդակել լուսանկարչական վավերագրական այնպիսի ծրագրերի, որոնք կատված են երկարատեւ դիտարկումների հետ: Դիտարկումների առարկա կարող է լինել առանձին անհատ, անհատների խումբ, համայնք, տարածաշրջան կամ խնդիր:

Հաղթողները կստանան մինչեւ 1500 ԱՄՆ դոլարի համարժեք նպաստ: Այն նախատեսված է այն ձեռնարկումների համար, որոնք դժվար կլինեն իրականացնել առանց Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի (ԲՀԻՕՀ) օգնության:

Ծրագիրը պետք է իրականացվի մինչեւ 1998 թ. սեպտեմբերի 1-ը: Ծրագրի ավարտից հետո մասնակիցները պետք է ներկայացնեն աշխատանքների պորտֆոլիոն: ԲՀԻՕՀ-ն իրեն վերապահում է ցուցահանդեսի կազմակերպման եւ (կամ) կատալոգի հրատարակման իրավունք: Առանձին աշխատանքների եւ ամբողջ ծրագրերի հեղինակային իրավունքները մնում են հեղինակների մոտ:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. Ծրագրի նկարագրությունը եւ նրա կապը Ձեր նախորդ աշխատանքի հետ (մեկ էջից ոչ ավելի).
2. Ձեր ստեղծագործական գործունեության հակիրճ նկարագրությունը (1 էջ).
3. Ձեր նախագծի հետ առնչվող 10-15 լուսանկար (սեւ-սպիտակ, գունավոր, սլայդ): Աշխատանքների վերադարձը չի երաշխավորվում, հեղինակային իրավունքները պահպանվում են:

Փաստաթղթերը պետք է ներկայացվեն Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ մինչեւ ս/թ մայիսի 15-ը:

Հասցե՝ Երեւան 375019, Այգեձոր 53բ
Հեռ. 27-21-19, 27-17-19

Մրցույթի արդյունքները հայտնի կդառնան 1998 թ. հունիսի 1-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան Ընկերությունը աշխատանքի է հրավիրում աշխատասեր եւ աչալուրջ մարդկանց (ցանկալի է բարձրագույն կրթությամբ)

Տեղերը սահմանափակ են

Տեղեկությունների համար զանգահարել

56-28-63 միջեւ ժամը 15:00

ԿՈՐԵԼ Է

«Կարմեն» կոոպերատիվի կլոր կնիքը եւ անկյունային դրոշմը

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան Դեկաբրիստների փ. 5/3 հարկում

Զանգահարել ***24-25-88***

ALLIANCE Co Ltd

ԱԼԻԱՆՍ ՍՊԸ

«Ալիանս» ՍՊԸ-ն առաջարկում է

Պոլիէթիլեն (ցածր ճնշման) 1 կգ 560 դրամ

Մեր հասցեն է. Տոպագրիչների 9, թիվ 35/36, Հեռ.՝ 52.16.00, 58.98.49, 52.93.90, ֆաքս՝ 56.51.02, կառ.՝ 68.56

ԼՈՒՅՍԱՐՎՈՒՄ Է

ՀՀ պետռեգիստրի Արաբկիրի տարածային բաժնում գրանցված «Մ. Շախբեկյան» անհատականեռ:

Գրանցման հ. 264.020.03593

Վկայականը 01Ա հ. 034400

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

1 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 11 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:

Հեռ.՝ 44-92-34, 44-66-95

(«Հ... ենիք» կինոթատրոնի մոտ)

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

հայկական մասնաճյուղ (ԲՀԻ ՕՀ ՀՄ)

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Ազգային կրթական ծրագիրը սույն թվականի մայիսի 11-ին կազմակերպում է կլոր սեղան նվիրված դպրոցական պարտադիր ուսումնական պլանների շրջանակներում նախատեսված առարկաների դասավանդման խնդիրներին: Կլոր սեղանին մասնակցել ցանկացողները պետք է նախապես դիմեն ԲՀԻ ՕՀ գրասենյակ հետեւյալ հասցեով

Երեւան, Այգեձորի 53 բ. հեռ. ***272119, 271713, AT&T: 151 088***

Դիմումները ընդունվում են մինչեւ մայիսի 1-ը:

Robin Generators **RGX3500**

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հաճախակ.	մակս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 կվտ	2.5 կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 կվտ	3.0 կվտ	6.1 ժ	



Ուզո՞ւմ եք նիհարել

անվնաս, առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:

Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով

52-93-53

ժամը 9-18-ը

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 803. Տիրաժը 3500. Ստորագրված է տպագրության 16.04.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@